Azg Ազգ

3 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 17(4636)

ISSN: 1829-1651

ԵԱՀԿ տարածքի հակամարտությունների համար՝ ընդհանուր սկզբունքներ

Անհրաժեշտ է համաձայնեցնել ԵԱՀԿ տարածքում հակամարտությունների կարգավորման ընդհանուր սկզբունքները: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այս հայտարարությունը, որ արվել է ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի ԱԳ նախարար Առնորաս Ամբրազևիչի մոսկովյան այցելությանը տեղի ունեցած համատեղ ասուլիսում, բավականին հետաքրքրական մեկնաբանությունների կարող է արժանանալ՝ ելնելով Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հանդեպ Ռուսաստանի դիրքորոշումից:

Ամեն դեպքում, ռուսաստանյան լրատվամիջոցները տեղեկացնում են, որ Լավրովն ընդգծել է հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը՝ «հաշվի առնելով կողմերի դիրքորոշումները եւ թույլ չտալով հակամարտության գոտու բնակչության համար մարդասիրական խնդիրների առաջացումը»:

Նշելով, թե յուրաքանչյուր հակամարտություն ունի իր յուրահատկությունը, Լավրովը տեղեկացրել է, որ Լիտվայի իր գործընկերոջ հետ քննարկվել է նաեւ ղարաբաղյան հակամարտությունը, որում ՌԴ-ն ակտիվ դերակատարություն ունի ինչպես ազգային կտրվածքով, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Լիտվայի արտգործնախարարը նույն ասուլիսում հավաստիացրել է, որ կջանա շոշափելի առաջընթացի հասնել ԵԱՀԿ տարածքում երկար ձգվող հակամարտությունների, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտության առնչությամբ: ԵԱՀԿ պատշգամբային կայքէջի համաձայն, Աժուբալիսը Մոսկվայում հայտարարել է, որ Լիտվան կենտրոնանալու է «չկարգավորման հակամարտությունների՝ առկա ձեւաչափերով առաջընթաց գրանցելու վրա»:

Ավելի կոնկրետ, Լիտվայի արտգործնախարարն իր աջակցությունն է հայտնել Մինսկի խմբի ջանքերին: «Այս համատեքստում մենք աջակցում ենք Ռուսաստանի ջանքերին, որոնք ուղղված են խաղաղ կարգավորման ուղղությամբ առաջընթացի հասնելուն», ասել է Աժուբալիսը:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ.Գ. ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ, ներկայումս Ադրբեջանում ԱՄՆ դեսպան նշանակված Մեթյու Բրայզան հաստատապես ամենատեր կապերով է կապվել, եթե իհարկե կապված չէր, ադրբեջանական իրականությանը, այլապես արդեն դեսպանի կարգավիճակում Ջորջթաունում իր պատվին տրված ադրբեջանական ընդունելությանը չէր հայտարարի, թե ղարաբաղյան հարցի «խաղաղ եւ արդարացի լուծումը» իր համար առաջնահերթություն է: Հետաքրքրական է, թե ԱՄՆ-ի ինչի՞ն է պետք Մինսկի խմբում համանախագահ ունենալը, եթե հակամարտության կարգավորումն իր պարտականություններից վեր է դասում Ադրբեջանում ԱՄՆ նորանշանակ դեսպանը: Կամ գուցե Բրայզան մոռացել է, թե որպես ով է կրկին խոսում Ղարաբաղի մասին:

40 տոննա ոսկի են գտել

Հայաստանում եւս մեկ ոսկու հանքավայր՝ Ամուլսարը, նախատեսվում է շահագործել բաց եղանակով: Հետախուզման արտոնագիր ստացել է «Գեոթիմ» ընկերությունը, որը Հայաստանում ներկայացնում է կանադական «Lidian International» ընկերության շահերը: Ամենայն հավանականությամբ հանքավայրի շահագործումը կսկսվի 2011թ.: «Էկոլուրի» փոխանցմամբ՝ ընկերությունը հայտարարել է, որ Հայաստանում Ամուլսարը ոսկու պաշարների նոր հայտնություն է: Ընկերության տվյալներով՝ հանքավայրը պարունակում է 1,4 միլիոն ունցիա ոսկի՝ մոտ 40 տոննա: Ոսկու կորզման համար ընկերությունը ենթադրում է կիրառել կույտային տարալվացման մեթոդը, ինչի դեպքում կարելի է 95-97 տոկոս ոսկի կորզել: «Lidian Internatioanl»-ի բաժնետոմսերը արժեթղթերովում են Տորոնտոյի ֆոնդային բորսայում: Ընկերության գլխավոր բաժնետերը IFC միջազգային ֆինանսական կորպորացիան է, որը Համաշխարհային բանկի, «Newmont Mining Corporation»-ի ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական խմբի մի մասն է: «Էկոլուրի» տեղեկությամբ՝ հնդիկ միլիարդատեր Անիլ Ագարվալի Հայաստան այցելությունն ամենայն հավանականությամբ կապված է վերոնշյալ գործարքին:

Հ. Հ.

PKK-ին հարող RojTV-ն՝ Նոբելյան մրցանակի թեկնածու

Այդ մասին երեկ կայքէջում տեղեկացրել է «Դունիա բյուլթենի» գործակալությունը: Ըստ տեղեկության, RojTV-ն, որի դեմ Դանիայում Եվրոմիության եւ ԱՄՆ-ի ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում ընդգրկված PKK-ի հետ ունեցած առնչությունների պատճառով դատական գործ է հարուցվել, թերեւս Նոբելյան մրցանակի ամենավիճելի թեկնածուն է: Այս հեռուստատեսության թեկնածությունը առաջադրողների մեջ են Նոբելյան մրցանակի դափնեկիր հարավաֆրիկացի Դեզմոնդ Թութուն արքեպիսկոպոսը, աշխարհում խոշանգվածների ապաքինման եւ վերականգնողական առաջին կենտրոնի հիմնադիր Ինգե Գենեւկեն, Դանիայի Հելսինկյան կոմիտեի անդամ Տուե Մագնուսենը, ՄԱԿ-ի խոշանգումների դեմ պայքարի հանձնաժողովի անդամ Բենս Սորենսոնը, մի շարք գիտնականներ եւ իրավապաշտպաններ:

RojTV-ի առաջադրման առնչությամբ «Պոլիտիկեն» թերթին տված հարցազրույցում խոշանգվածների ապաքինման եւ վերականգնողական կենտրոնի հիմնադիր Գենեւկեն ասել է. « RojTV -ն աշխարհին հնարավորություն է տալիս ծանոթանալու Թուրքիայի քրդերի տառապանքներին: Թուրքական մամուլը իշխանությունների ճնշման տակ խուսափում է ներկայացնել իրականությունը: Հակառակ դրան RojTV -ն, հաղորդելով ճշմարտությունը, նպաստում է, որ զարգանան քրդերի ազգային ինքնագիտակցությունը եւ արդարության նկատմամբ ունեցած հավատը»:

Հ. Ջ.

«Թուրքիան ներշնչանքի աղբյուր էր Հիտլերի համար»

Հայտարարել է շվեդ նախարարը

Հունվարի 27-ը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումով 2005-ին հռչակվեց «Հոլոքոստի զոհերի հիշատակման միջազգային օր»: Օրվա առնչությամբ Ստոկհոլմի սինագոգներից մեկում ելույթ է ունեցել Շվեդիայի ինտեգրացիայի նախարար Էրիկ Ոլենհագը եւ, թուրական «Զիհան» գործակալության վկայությամբ, թուրքերին միեւնույն նժարի վրա է դրել Ադոլֆ Հիտլերի ու Սադդամ Հուսեյնի հետ:

Նա, ըստ թուրական գործակալության, ասել է. «Եկեք վերհիշենք 1970-ին Կամբոջայում, 1980-ին Սադդամի Իրաքում, 90-ականների Բոսնիայում եւ Ռուանդայում, իսկ 2000-ին՝ Դարֆուրում իրագործված ցեղասպանությունը: Ադոլֆ Հիտլերն ասել էր՝ «ո՞վ է հիշում հայերի բնաջնջումը», ակնարկելով ժամանակակից Թուրքիայում մեկ միլիոն հայերի եւ կես միլիոն ասորիների ցեղասպանության մասին: Թող ոչ ոք չլսի «ո՞վ է հիշում հրեաների հետ կատարվածը» արտահայտությունը: Ցեղասպանությունն ուրացողների հաղթանակը անարդարություն է լինելու ցեղասպանության զոհը դարձած ժողովուրդների նկատմամբ»:

Հ. Ջ.

ՍՏԱՄԲՈՒԼ

«Կորչի հայ-իրանական համագործակցությունը»

Այս կարգախոսով ադրբեջանցիները ցույց են կազմակերպել Ստամբուլում Իրանի հյուպատոսարանի առջեւ

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Հայտայցությունը կենտրոնացել է դարձել ադրբեջանցի հրոսակի համար, որը լկտիանալու թերեւս ոչ մի առիթ բաց չի թողնում ինչպես Ադրբեջանում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Լկտիության պարագայում խոսքը հրոսակների Ստամբուլում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսարանի առջեւ փետրվարի 1-ին «Իրանն, չխառնվես մեր ներքին գործերին» կարգախոսով կազմակերպած բողոքի ցույցի մասին է:

Ինչպես երեկ նշել է «Զամանը», ադրբեջանցիների շուրջ 50-հոգանոց մի խումբ, պատճառաբանելով թե Իրանը միջամտում է Ադրբեջանի ներքին գործերին, հավաքվել է հյուպատոսարանի առջեւ եւ ինքնամոռաց բացականչել. «Ղարաբաղը թուրքերինն է, թուրքական մնալու», «Իրան, կարգի եկ, մեր համբերությունը հատում է», «Կեցցե Ադրբեջան-Թուրքիա բարեկամությունը, կորչի հայ-իրանական համագործակցությունը», «Հայաստան, դուրս Ղարաբաղից»: Ցուցարարները կրել են նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմեդինեժադի հանդիպումը պատկերող լուսանկարներ:

Բացականչություններից հետո հրոսակների այս խումբը Իրանին կոչ է արել խզել հարաբերությունները «Ղարաբաղն օկուպացրած Հայաստանի հետ» եւ վերջ տալ Ադրբեջանի վրա գործադրվող ճնշումներին: Խմբի անունից հանդես է եկել «Թյուրքական աշխարհի մշակույթի եւ մարդու իրավունքների» միության նախագահ Ջելալ Օջալը: *Տես էջ 2*

Լենմարկերի փոխարեն՝ ԵԱՀԿ ԽՎ նոր հատուկ ներկայացուցիչ

ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի գալիք նստաշրջանում, ըստ ադրբեջանական «Թրենդ» գործակալության տեղեկությունների, ամենայն հավանականությամբ կարող է քննարկվել Լեռնային Ղարաբաղի, նաեւ ընդհանուր՝ Հարավային Կովկասի հակամարտությունների հարցերով նոր հատուկ ներկայացուցչի թեկնածությունը:

Վիեննայում փետրվարի 24-25-ին տեղի ունենալիք նստաշրջանում, որտեղ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի կքննարկի հատուկ ներկայացուցչի թեկնածությունը, կներկայացվի թեկնածություն ԵԱՀԿ ԽՎ նախագահի կողմից: Նոր հատուկ ներկայացուցիչը փոխարինելու է Գորան Լենմարկերին, որը պաշտոնը թափուր է թողել դեռեւս նոյեմբերին՝ 2010-ի սեպտեմբերին Շվեդիայում տեղի ունեցած ընտրություններում պարտվելու պատճառով:

Առայժմ չի հրապարակվում այս պաշտոնում հավանական որեւէ թեկնածուի անուն:

Ա. Հ.

Կեղծ թղթադրամներ եւ մետաղադրամներ Հայաստանում

Կեղծված 1000 եւ 5000 դրամանոց թղթադրամների եւ 500 դրամանոց մետաղադրամի մասին երեկ մեզ հայտնեց եւ խմբագրություն բերեց մեր ընթերցողներից մեկը: 1000 եւ 5000 դրամանոցների կեղծ լինելը աչքի է զարնում առաջին իսկ հայացքից: Դրանք պարզապես պատճենահանված են գունավոր տպիչով, իսկ թուղթը սովորական տպագրական թուղթ է: Միեւնույն ժամանակ, կեղծ թղթադրամների ներսի պատկերը որոշ չափով տեղաշարժված է: 5000 դրամանոցի հոլոգրաֆիկ նշանը, որ գտնվում է 5000 թվի վերեւում, ակնհայտորեն պատճենված էր: Այսինքն, կեղծ 1000 դրամանոցներն ու 5000 դրամանոցներն անմիջապես կարելի է

զանազանել իսկականից: Ինչ վերաբերում է 500 դրամանոց մետաղադրամին, ապա ավելի վարպետորեն էր կեղծված, թեեւ ուշադիր լինելու դեպքում կարելի է տեսնել նրա մակերեսին կետեր եւ խզվածքներ, ավելի թեթեւ էր եւ գցելիս խուլ ձայն էր հանում:

«Ինչպե՞ս վարվել կեղծ թղթադրամներ եւ մետաղադրամների հանդիպելիս»՝ մեր հարցին Կենտրոնական բանկից պատասխանեցին, որ հարկ է դիմել ոստիկանություն, քանի որ թղթադրամների կեղծումը քրեորեն պատժելի է: Միաժամանակ, Կենտրոնական բանկը կոչ է անում քաղաքացիներին ուշադիր լինել եւ չդառնալ կեղծարարների խարդախության զոհը:

Մեր մատնանշած կեղծ դրամների տարբերությունները իսկականների համեմատ, հուսով ենք, նույնպես կնպաստեն, որ մեր քաղաքացիները զգուշություն դրսեւորեն վերոնշյալ թղթադրամները վերցնելիս:

Ա. Մ.

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Խաղաքարտերը բացում են

Արդեն կարելի է չկասկածել՝ երբ տարեմուտի գիշերն Իլհամ Ալիեւն իրեն հռչակում էր «ամբողջ աշխարհի ադրբեջանցիների առաջնորդ», նա կատարում էր գիտակցական ընտրություն:

Իհարկե, դրանից չի հետեւում, թե նա անձամբ հավատում է այդ տեսլականին: Ադրբեջանի նախագահն ընդամենը խնդիր ուներ Իրանի հետ հարաբերությունները սրել: Բնականաբար, ողջախոհ քաղաքական գործիչն իրեն նման շռայլություն չթույլատրեր է թույլ տար, բայց ո՞վ է ասել, որ օրինաչափությունից բացառություններ չեն լինում: Իլհամ Ալիեւը հենց այդ բացառությունն է: Թեեւ, հարկ է խոստովանել, դժվար թե նա առանց «արտաքին ազդակների» համարձակվեր անհանգստություն պատճառել Իրանի նման հարեւանին:

Եվ սակայն վիճակը կարծես նետված է: Այդպիսի ենթադրություն անելու համար հիմք են հանդիսանում տեղեկատվական «փոխհրաձգությունները», որ Իրանի եւ Ադրբեջանի միջեւ ոչ թե նվազում, այլ, հակառակը, ուժգնանում են: Ազերի լեզվով հեռարձակող «Սահար» իրանական հեռուստատեսությունն Իլհամ Ալիեւի ռեժիմն անվանել է «սիոնիստական»: Ադրբեջանական կողմն իր հերթին Իրանի իշխանությունը համարում է «մոլլատեսություն»:

Ընդ որում, Բաքվում չեն խորշում իրանական կողմին մեղադրել «իսլամական համերաշխությունը չհարգելու» մեջ: Բանը հասել է նրան, որ ադրբեջանական քարոզչամիջոցները բացահայտ խոսում են, որ «Իրանը չի միացել երկու մահմեդական եղբայրների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակմանը, որը նրան կհասցներ կործանման եզրին»:

Նման փորձեր արվե՞լ են: Պարզվում է՝ այո: Այն էլ՝ ամենաբարձր մակարդակով: Ինչպես գրել է 1news.az-ի մեկնաբան Ռաշիդ Աբդուլլաեւը, Իրան կատարած պաշտոնական այցի ժամանակ Հեյդար Ալիեւը խնդրել է, որ Թեհրանը «դատապարտի Հայաստանի քաղաքականությունը», ինչին նախագահ Խաթամին պատասխանել է . «Հայաստանն Իսրայելը չէ, ոչ էլ ադրբեջանցիները՝ պաղեստինցիներ»:

«Համազգային առաջնորդի» դիվանագիտական խայտառակության մասին հազիվ թե այսքան բաց խոսք ասվեր, եթե չլիներ իշխանությունների թույլտվությունը: Իսկ դա նշանակում է, որ վերջիններս կարող են գնալ նաեւ այլ բացահայտումների: Ի՞նչ նպատակ են դրանք հետապնդում:

Ըստ երեւույթին, Բաքուն մտադիր է իսլամական աշխարհում Իրանի հեղինակությանը լուրջ վնաս հասցնել: Հնարավոր է, որ դա ինչ-որ հեռահար նպատակներ հետապնդող քարոզչություն է: Ադրբեջանական կողմը թերեւս կատարում է որեւէ արտաքին ուժի պատվեր, բայց, միաժամանակ, ինչքան խորանում է Իրանի հետ գաղափարական դիմակայությունը, այնքան հասկանալի է դառնում, որ բուն հակասությունն ավելի արմատական է:

Հիշյալ մեկնաբանը մասնավորապես չի թաքցնում, որ Իրանը «դեմ է Ադրբեջանի հզորացմանը՝ ելնելով իր ազգային անվտանգության եւ տարածքային ամբողջականության շահերից»:

Ստացվում է, որ նա կամա թե ակամա խոստովանում է, որ Ադրբեջանն Իրանի հանդեպ տարածքային հավակնություններ ունի: Եվ դրանք կարող են մի օր ավելի առարկայական ներկայացվել:

Պահանջ թե ցանկություն, բայց գաղափարն արդեն ձեւակերպված է: «Աշխարհի բոլոր ադրբեջանցիների համերաշխության օրը», որ սահմանվել է դեռեւս ԱԺՃ իշխանության տարիներին եւ հազվագյուտներից է, որ Հեյդար Ալիեւի կողմից չի վերացվել՝ որպես էլչիբեյից մնացած ժառանգություն, Ադրբեջանում պաշտոնապես նշվում է «բաժանված հայրենիքի միավորման» ակնհայտ քարոզչությամբ:

Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ «տոն օր» ընտրվել է դեկտեմբերի 31-ը: 1989թ. հենց այդ օրն են քանդվել իրանա-խորհրդային սահմանի ադրբեջանական հատվածի բոլոր ինժեներական կառույցները, եւ տեղի է ունեցել մարդկանց զանգվածային հոսք դեպի Իրան՝ հատկապես Նախիջեւանում: Եվ եթե նույն օրն Իլհամ Ալիեւը հանդես է գալիս որպես «աշխարհի բոլոր ադրբեջանցիների առաջնորդ», ապա բնական է, որ իրանական կողմը դա ընկալում է իբրեւ իր հասցեին սպառնալիք:

Հնարավո՞ր է, որ Ադրբեջանը պարզապես դավագրգռում է Իրանին՝ վերջինիս մղելով «անհավասարակշիռ» քայլերի, որոնք կարող են առիթ դառնալ արտաքին ուժերի միջամտության: Ոչինչ բացառելի չէ: Ակնհայտ է մի բան. երկու երկրների հարաբերություններում առկա խնդիրների գոնե տեղեկատվական մակարդակի բացահայտումներն սկսված են: Հատկապես՝ Բաքվից: Իսկ դա ինչ-որ բան նշանակում է:

ՎԱՀԲԱՍ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Դասախոսություն նավթի արտահոսքերի եւ միջավայրի պահպանության վերաբերյալ

Սաուդյան Արաբիայի «Արամկո» հասատությունում տեղի է ունեցել դասախոսություն նավթահարթակների պայթյունի հետեւանքով առաջացած նավթի արտահոսքերի եւ շրջակա միջավայրի մաքրության պահպանման վերաբերյալ, տեղեկացնում է տեղի «Արքայազն Մոհամմադ բին Ֆահդ» համալսարանի լրատվության բաժնի ղեկավար Ասիֆ Անուար Ալիգը: Այդ համալսարանի մեխանիկական ճարտարագիտության բաժնից պրոֆ. Հուսեյն Մուրաս Չեկիրջին կենտրոնացել է հիմնականում նավթային արտահոսքերի օրինակների, պատահականությունների զանգառման եւ ռիսկային հիմնահարցերի վրա, ներկայացնելով զգուշավորության վերլուծական կարեւոր կետեր, որոնք կպահպանեն շրջակա միջավայրը աղտոտվածությունից: Նա կոչ է արել «Արամկո» ընկերությանը համագործակցել՝ կանխելու հետագայում անսպասելիորեն առաջացած հնարավոր միջադեպերը:

Հ. Ծ.

«Կորչի հայ-իրանական համագործակցությունը»

1-ին էջից

Նա Ադրբեջանի ներքին գործերին ուղղակի միջամտություն է համարել Իրանի խորհրդարանի պատգամավորների եւ հոգեւոր որոշ գործիչների ճնշադատությունները, որոնք ուղղված էին ադրբեջանական իրականության մեջ հավատքին հետամուտ մահմեդականների իրավունքների ոտնահարման դրսեւորումներին, ապա դատապարտել է «Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը օկուպացիայի ենթարկած եւ ավելի քան 30 հազար ադրբեջանցիներին ոչնչացրած Հայաստանի նման պետության հետ» իրանական կողմի համագործակցությունը:

Այնուհետեւ Օջալն ասել է. «Հայերի պատճառով ավելի քան 50 հազար մարդ վիրավորվեց կամ հաշմանդամ դարձավ: Հիմնահատակ ավերվեցին 890 դպրոց, 855 մանկապարտեզ, 44 պատմական հուշարձան եւ 90 մզկիթ: Դրանով հանդերձ Իրանը մերձենում է Հայաստանին: Աշխարհում Իրանը Հայաստանին աջակցող իսլամական միակ պետությունն է»: Նա ընդգծելով, որ Իրանն անտեսում է երկրում բնակվող ավելի քան 30 մլն ադրբեջանցիների իրավունքները եւ փորձում է ձուլել, ավելացրել է. «Իրանն անհապաղ պետք է խզի Հայաստանի հետ հարաբերություններն ու ցույց տա, որ թուրքերի եւ իսլամի բարեկամն է»: Օջալի ելույթից հետո խումբը սեւ ծաղկեպսակ է դրել Իրանի հյուպատոսարանի առջեւ եւ ցրվել:

Նախ պետք է ասել, որ մահմեդականների իրավունքների ոտնահարման համար Իրանից ադրբեջանական իշխանություններից հասցեագրված ճնշադատությունները ամենեւին էլ Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու դրսեւորում չեն: Մի պահ ենթադրենք, որ միջամտել են, ապա Հայաստանը, Ղարաբաղն ու հայ-իրանական բարեկամությունը ի՞նչ առնչություն ունի ենթադրվող միջամտությունը դատապարտելու հետ:

Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ մահմեդականների իրավունքների ոտնահարումը նոր երեւույթ չէ Ադրբեջանում: Դա սկսել էր դեռեւս Հեյդար Ալիեւի օրոք, երբ հաջորդաբար փակվում էին իրանական հոգեւոր դպրոցներն ու մեդրեսները, երկրից վտարվում էին իրանցի հոգեւորականները: Դրան էր հետեւել արաբական հոգեւոր կենտրոնների եւ այս կենտրոններին առընթեր գործող բարեգործական միությունների գործունեության արգելումը երկրում:

Ադրբեջանում մահմեդականների իրավունքների ոտնահարումը վերաճեց բացահայտ ճնշումների, երբ նախագահի պաշտոնում Հեյդարին փոխարինեց Իլհամը: Այս ճնշումները, ինչպես 2010-ի օգոստոսի 12-ի համարում գրել էր թուրքական «Դունյա բուլթենի» գործակալության կայքէջը, արտահայտվեցին նախ մզկիթները փակելու, ապա եւ քանդելու դրսեւորումներով: Ի դեպ, փակելու առումով թուրքերի եղբայր ադրբեջանցիները չէին խնայել նաեւ թուրքական մզկիթները, որը բուռն հակազդեցություն էր առաջ բերել Թուրքիայում:

Քանի որ մզկիթների փակումը, առավել եւս քանդումը հոգեւոր կենտրոններով հանդերձ, ինչպես նաեւ հոգեւորականների երկրից վտարումը չի կարող որեւէ առնչություն ունենալ մահմեդականության հետ, ուստի ենթադրելի է, որ հայատյացության ջղաձգումներով են պայմանավորում ադրբեջանցի հրոսակի մահմեդականությունն ու հավատարմությունը իսլամին: Եթե թուրքական մզկիթների փակումը թուրքերի հետ եղբայրության դրսեւորում չէ, ապա նույնը պետք է վերաբերի թուրք-ադրբեջանական եղբայրությանը:

Գալով «ինչ առնչություն ունի Հայաստանը, Ղարաբաղն ու հայ-իրանական համագործակցությունը Ադրբեջանի ներքին գործերին Իրանի ենթադրվող միջամտությունը դատապարտելու հետ» հարցին, ապա պետք է ասել այն, ինչ ունեցել են ադրբեջանցի եւ ժողովուրդ հասկացությունները, որովհետեւ ժողովուրդը մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրությունն է, իսկ ադրբեջանցիները, որ մինչեւ 20-րդ դարի 30-ական թթ. կովկասի թաթարներ էին կոչվում, հայ սպանելու համար մարդասպան սահակին ազգային հերոս հռչակողների հոմակ: Ըստ երեւույթին սրանք ղարաբաղյան պատերազմում կրած խայտառակ պարտությունից դասեր չեն քաղել:

ՄՏԱՇՈԳԻՉ

Մանկապիղծները չեն ստանում արժանի պատիժ

Երեխայի մեղքով չէ, որ ինքը սեռական հանցագործության զոհ է դառնում: Հայկական մենթալիտետը, մտածողությունը հաճախ ծնողներին դրդում են գաղտնի պահել հանցագործությունն ու երեխայի հետ կատարվածը: Նման դեպքերի չբացահայտվելը, պատժողական մեղմ քաղաքականությունը ոչ միայն խոչընդոտում են, որ հանցագործները կրեն իրենց արժանի պատիժը, այլեւ հասարակության մեջ կարծես ձեւավորում են անհանդուրժող վերաբերմունք ոչ թե հանցագործի, այլ զոհի նկատմամբ: Հարազատներն ամաչում են բարձրաձայնել, որ իրենց երեխան ենթարկվել է սեռական ոտնձգության կամ սեռական հանցագործության զոհ է: Երեկ «Անի» հյուրանոցում հրավիրված ասուլիսը վերաբերում էր սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի պաշտպանության խնդիրներին: ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման եւ եվրոինտեգրման բաժնի ավագ դատախազ **Արթուր Ղամբարյանը** նշեց, որ այս թեման Հայաստանում ոչ միայն հրատապ է, այլեւ մտահոգիչ. «Սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի իրավական կարգավիճակին, պաշտպանությանը կապված խնդիրները կարծես դուրս են մնացել ե՛ւ օրենսդիր, ե՛ւ գործադիր իշխանությունների քաղաքականության դաշտից»: Խնդիրներից Արթուր Ղամբարյանն առանձնացրեց հատկապես պատժողական մեղմ քաղաքականությունը:

Բացի դրանից՝ նաեւ դժվար է սեքսուալ բնույթի հանցագործությունները ապացուցելը: Դատական դեպարտամենտի քրեական գործերի մասնագետ **Հայկ Հարությունյանը** տեղեկացրեց, որ Հայաստանում վերջերս արձանագրվել է սեռական բնույթի հանցագործությունների կտրուկ աճ՝ ուղղված անչափահասների դեմ: «Ուսումնասիրելով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2000-2010 թվականների ընթացքում անչափահասների դեմ կատարված սեռական բնույթի հանցագործությունները՝ պետք է նշեմ, որ վերոնշյալ հանցագործություններում ընդհանուր տուժողների թիվը կազմում է 112, որից 101-ն անչափահասներ են», հավելեց Հայկ Հարությունյանը: Այնուամենայնիվ, բանախոսի նշած ցուցանիշը չի կարող տալ իրական պատկերացում, թե վերջին 10 տարիներին քանի անչափահասներ են սեռական հանցագործությունների զոհ դարձել, որովհետեւ շատ դեպքեր գաղտնի են մնում: Անդրադառնալով պատժամիջոցներին՝ դատական դեպարտամենտի ներկայացուցիչը համաձայնեց Արթուր Ղամբարյանի հետ, որ նման դեպքերում դատական համակարգի պատիժներն իսկապես մեղմ են:

Մյուս բանախոսը՝ «People in need» կազմակերպության «Երեխաների թրաֆիկինգի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի ղեկավար **Տաթեւիկ Բեժանյանը**, անդրադարձավ վերջերս «Հետք» էլեկտրոնային թերթի այն հրապարակմանը, որի մեջ խոսվում է «Մեթըլ Փրինս» կորպորացիայի սեփականատեր, ՀՀ վարչապետի նախկին խորհրդական, Միացյալ Նահանգների քաղաքացի Սերոբ Տեր-Պողոսյանի մանկապղծությամբ զբաղվելու լուրերից: Վերջին տարիներին այդ լուրերն անընդհատ պտտվել են Ախթալայում, Ալավերդիում ու Երեւանում: «Հետքը» նաեւ գրում է, որ այդ լուրերին տարիներ շարունակ տեղյակ են եղել ոստիկանության Թումանյանի բաժնում եւ Ազգային անվտանգության ծառայության Ալավերդու բաժանմունքում: Հունվարի 22-ին Ախթալա համայնքի 25-ամյա բնակիչ Վահրամ Փարսադանյանն իր ձեռքի տակ եղած տեսագրությունը, որը պատկերում է Սերոբ Տեր-Պողոսյանի մանկապղծությունը, հանձնել է իրավապահներին: Դրանից էլ գործը սկսել է բացվել: Երեկ ասուլիսի ժամանակ Տաթեւիկ Բեժանյանը նշեց, որ այդ մասին տեղեկություններ ունեցել է. «Սակայն սպասում էի փաստերի ի հայտ գալուն, որպեսզի խոսեինք այդ մասին»:

Վարչապետ Տիգրան Սարգսյանն իր բլոգում նույնպես անդրադարձել է թերթի հրապարակմանը: Վարչապետը գրել է. «Բարեկամներ, այսօր ինձ փոխանցեցին hetq.am կայքում հրապարակված հոդվածը, որտեղ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի սեփականատեր, ՀՀ ոստիկանության հասարակական խորհրդի անդամ , «Համագործակցության համար» մեդալի մեդալակիր եւ հասարակական հիմունքներով իմ նախկին խորհրդական Սերոբ Տեր-Պողոսյանը մեղադրվում է ծանր, անբարո հանցագործության մեջ»: Տիգրան Սարգսյանը նաեւ գրել է. «Կարող եմ միայն խոստանալ. հետեւելու եմ, որ այս հրապարակման հետքերով քննությունը լինի արագ, համակողմանի եւ թափանցիկ»:

Ասուլի ժամանակ Տաթեւիկ Բեժանյանը նաեւ կարեւորեց, որ մեզանում սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի պաշտպանության լուրջ խնդիր ունենք:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հանդիպում

«Ես բավարարված չեմ»

ՄԻՊ-ը հրաժեշտ է տալիս ու մեկնում Բիշքեկ

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանը** հրաժարական է ներկայացրել Ազգային ժողովին: Այսուհետեւ նա սանձնելու է Կենտրոնական Ասիայում Միացյալ ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի տարածաշրջանային ներկայացուցչի պաշտոնը, նստավայրը՝ Բիշքեկ: Հայաստանում աշխատել Հարությունյանն այլեւս չի ցանկանում: Ապագայում էլ մտադիր է աշխատանքը շարունակել մարդու իրավունքների միջազգային համակարգում:

Անդրադառնալով իր կատարած աշխատանքին՝ պաշտպանն ընդգծում է, որ 5 տարվա ընթացքում փորձել է հնարավորինս հեռու պահել ՄԻՊ ինստիտուտը քաղաքական գործընթացներից: Հարությունյանը խոստովանում է, որ այս առումով դեռ անելիքներ կան, որովհետեւ իրեն չի հաջողվել ամբողջությամբ փարատել այն կասկածները, որ ՄԻՊ ինստիտուտը անկախ է ու չի պաշտպանում որեւէ ուժի:

Նոր պաշտպանին էլ խորհուրդ է տալիս զբաղվել այդ հարցով եւ պատրաստ լինել, որ քաղաքական այս կամ այն ուժն իրեն մամուլի միջոցով քաղաքական շանտաժի կենթարկի:

Պաշտոնավարման 5 տարվա ընթացքում պաշտպանի գրասենյակը ստացել է 18346 դիմում-բողոք, վերականգնվել է 8703 անձանց խախտված իրավունքը: Հիմնականում բողոքել են Երեւանի քաղաքապետարանի, մարզպետարանների, ոստիկանության, դատարանների ու արդարադատության նախարարության աշխատանքից:

«Այն քաղաքացիներից, ովքեր ավելին էին ակնկալում ինձնից, ներողամտություն եմ հայցում եւ հավաստիացնում, որ արել եմ առավելագույնը, ինչ կարող էի», հրաժեշտի ասուլիսի ժամանակ ասաց Արմեն Հարությունյանը:

«Մեզ շատ են քննադատել իշխանական եւ ընդդիմադիր թեւերից, բայց ես մեծ արդյունք եմ համարում, որ ոչ մեկին չձուլվեցինք: Բայց եթե հարցնեք՝ բավարարվա՞ծ եմ դրանով, կարող եմ փաստել, որ մենք չձուլվեցինք, բայց ես բավարարված չեմ», ասաց նա:

Անցյալ տարի ՄԻՊ-ի գրասենյակը 5221 անձանցից ստացել է 4089 դիմում-բողոք: Մեկ տարվա ընթացքում դրական լուծում է ստացել 123 դիմում-բողոք, վերականգնվել է 562 անձի խախտված իրավունքը:

Մարդու իրավունքները խախտած պետական եւ տեղական կառավարման մարմինների անցյալ տարվա թեժ հնգյակը կրկին գլխավորում է Երեւանի քաղաքապետարանը: Անցյալ տարի քաղաքապետարանի աշխատանքի դեմ պաշտպանի գրասենյակը ստացել է 447 դիմում-բողոք: Երկրորդ հորիզոնականում՝ ոստիկանությունն է՝ 233 դիմում-բողոք, այնուհետեւ դատարաններն ու գյուղապետարանները՝ համապատասխանաբար 185 եւ 179 դիմումներ: Թոփ հնգյակը եզրափակում է աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունը՝ 141 դիմում-բողոք: Անդրադառնալով 2008-ի մարտիմեկյան դեպքերին ու 10 սպանություններին, որոնք մինչ այսօր բացահայտված չեն, Արմեն Հարությունյանն ընդամենը երկու բառով բնութագրեց՝ լուրջ ձախողում:

«Համաձայն եմ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի հետ, որ դա իրոք լուրջ ձախողում է», ասաց Հարությունյանը: Թե ինչու սպանությունները չբացահայտվեցին՝ ՄԻՊ-ի պատասխանը հետեւյալն է. «Իրավապահ մարմինները օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել են, սակայն դժգոհ եմ, թե դա ինչպես են արել»: ՄԻՊ-ը չի կասկածում՝ իրավապահ մարմինների՝ սպանությունները բացահայտելու ցանկության մեջ, սակայն իրավապահ մարմինները պրոֆեսիոնալ ձեւով չեն աշխատել: «Դա լուրջ ձախողում է՝ անկախ պատճառներից: Պատճառը չի կարող ներել այն, ինչ եղել է», նշեց ՄԻՊ-ը:

Նա չի պաշտպանում նաեւ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի՝ Երեւանի փողոցներում առեւտուրն արգելելու որոշումը: «Չեմ կարծում, որ հենց այս ձեւով պետք է դա արվեր: Պետք է հնարավորություն ու ժամանակ տրվեին, որ մարդիկ տեղյակ լինեին, որ, ասենք, մեկ տարի կամ 6 ամիս հետո այդ հարցը լուծվելու է, ու նաեւ հնարավորություն ստեղծել, որ մարդիկ կարողանան գումար վաստակել»: Հարությունյանը կողմ է, որ փողոցային առեւտուրը Երեւանում վերանա, սակայն դեմ է, որ առեւտրականներին փողոցներից վտարում են:

Օմբուդսմենի գնահատմամբ՝ Հայաստանում սպառողների իրավունքները պաշտպանված չեն. պատճառը տնտեսական համակարգում մենաշնորհն է:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատգամավորը հայհոյել է լրագրողին

Առաջին անգամ չէ, որ ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանն աչքի է ընկնում կոպիտ ու բռի պահվածքով: Առաջին անգամ չէ, որ պատգամավորը հայտնվում է սկանդալի կենտրոնում, որովհետեւ անհարկի վիրավորում է ոչ միայն լրագրողներին, այլեւ իր աշխատակիցներին, պաշտոնով ցածր գործընկերներին, երբեմն աղտակում ու հայհոյում: Ցավալի է, սակայն պետք է փաստել, որ պատգամավորի վարքն արդեն ոչ ոքի չի զարմացնում:

Երեկ պատգամավորը վիրավորել ու հայհոյել է «Հետք» օրաթերթի լրագրող Գրիշա Բալասանյանին: Լրագրողի խոսքերով՝ զանգահարել է պատգամավորին՝ տեղեկանալու, թե ինչ բարոյական վնաս է կրել «Հայկական ժամանակ» օրաթերթի հրապարակումից հետո, որին վերջինս դատի է տվել:

Լրագրողի ներկայացմամբ՝ Ռուբեն Հայրապետյանը նրան անվանել է «տգետ» ու հավելել. «Ես լրատվական ծառայություն ունեմ, «չերեզ» լրատվական ծառայություն իմ հետ կամվի», պատասխանել է պատգամավորն ու անջատել հեռախոսը: Լրագրողը փաստում է, որ որեւէ պատգամավոր լրատվական ծառայություն չունի: «Երբ կրկին զանգահարեցի, որպեսզի պատգամավորից ճշտեմ նման պահվածքի ու լրագրողին վիրավորելու պատճառը, Ռուբեն Հայրապետյանը նախ ճշտեց՝ արդյոք զրույցը ձայնագրո՞ւմ եմ, թե՞ ոչ, իսկ երբ տեղեկացավ, որ ձայնագրվում է, սեռական բնույթի հայհոյանքներ սկսեց տալ: Վերջում էլ ավելացրեց՝ «Լավ արեցի», պատմում է Գրիշա Բալասանյանը:

Հիշեցնենք, որ Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանին նախագահի աշխատակազմի ղեկավարությունը փաստում է, որ դա իրոք լուրջ ձախողում է՝ անկախ պատճառներից:

Չնագունդը գլորվեց

Երեկ հայտարարություն է տարածել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որ վերաբերում է ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի մի հայտարարությանը տրվող մեկնաբանություններին:

«Մենք հետեւում ենք ՀՀԿ որոշ պատգամավորների մասնակցությամբ բեմադրված ներկայացմանը: Ընդ որում՝ հետեւում ենք շատ ուշադիր, որից հետո միայն անելու ենք հետեւություններ: Ի դեպ, թատերականացված շոուների փոխարեն կա ավելի կարճ ճանապարհ՝ ուղղակի դիմել ՀՀ երկրորդ նախագահի գրասենյակ», ասված է ԲՀԿ-ի հաղորդագրության մեջ: Հիշեցնենք, որ Գ. Ծառուկյանն անցած շաբաթ ասել էր, որ եթե Ռոբերտ Քոչարյանն ուզենար, կարող էր գլխավորել ՀՀԿ-ն, իսկ դա արժանացել էր ՀՀԿ-ականների (Ռազմիկ Զոհրաբյանի, Էդուարդ Շարմազանովի, Սուքիաս Ավետիսյանի) կոշտ մեկնաբանություններին: Դրան հաջորդել էր Ծառուկյանի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանի պատասխանը լրագրողի հարցին («Ծառուկյանը տեղյա՞կ է այդ մեկնաբանություններին»), թե՝ միայն ծանրակշիռ գործիչների մեկնաբանություններն են ներկայացվում ԲՀԿ առաջնորդին: Ինչպես տեսնում եք՝ շարունակությունը չի ուշանա:

Ավելի ուշ «Կենտրոն» հեռուստաընկերությունը տարածել է ԲՀԿ առաջնորդի նոր հայտարարությունը: «Վստահեցնում եմ, որ իմ հայտարարությամբ ես չեմ ցանկացել վիրավորել ոչ հանրապետական կուսակցությանը, ոչ էլ ՀՀԿ նախագահին: Այլ ուղղակի ցանկացել եմ մեկ անգամ եւս նշել, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն այլ ուժերի ու անձանց հետ արհեստականորեն կապելու փորձերը անիմաստ զբաղմունք են», ասել է Գ. Ծառուկյանը:

Մ. Խ.

ԱՐՅԱԳԱՆՔԵՐ

Սփյուռքահայերից պալատ ունենալու առաջարկի հեղինակը Հայկ Սանոյանն է

Երկպալատ խորհրդարան ունենալու մասին սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի՝ սփյուռքահայ լսարանի առաջ բացահայտած գաղափարը, չնայած դեռեւս անհասկանալի եւ հում լինելուն, եւ չնայած Հայաստանի նախագահի մամուլի խոսնակի պարզաբանմամբ՝ բազմաթիվ ուրիշների շարքում քննարկվելիք հնարավոր առաջարկներից մեկը լինելով, անմիջապես մեր քաղաքական դաշտում քննարկման շրջապտույտ սկսեց: Երեկ արդեն այդ գաղափարը մեկնաբանել են տարբեր քաղաքական գործիչներ: Փաստորեն սփյուռքից առաջարկների տեսքով այս գաղափարը հնչել է 2010 թվականի մայիսին, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ժամանակ: Սակայն «**Ազգն**» ուզում է ավելի վաղ ժամանակի հիշեցում անել՝ ՀՀԿ-ական պատգամավոր Հայկ Սանոյանն այդպիսի առաջարկ արել էր դեռ 2009 թվականի հունիսի 9-ին, Ազգային ժողովի հայտարարությունների ժամին, ինչի մասին մեր թերթը լուր տվել էր: Սանոյանի դեպքում այդպիսի առաջարկը հատկապես հասկանալի է՝ նա ծնունդով Վրաստանի հայաբնակ Նինոծմինդայի շրջանից է, «Վիրահայերի միության» ՀԿ նախագահության անդամ: Երեկ մեզ այցելած Հայկ Սանոյանն ավելի մանրամասնեց իր այն ժամանակվա առաջարկի էությունը գրավոր տարբերակով, ի դեպ, հենց այն ժամանակվա հայտարարությունից մի հատված ներկայացնելով: Մենք հետաքրքրական համարեցինք գաղափարի ավելի վաղ հնչելու փաստն ու այն մատուցելն ընթերցողին:

«Մենք կարիք ունենք ներքին համախմբման, ազգային ներուժի ամբողջական բացահայտման եւ ի նպաստ մեր ազգային խնդիրների իրականացման: Մենք պետք է հնարավորինս օգուտ քաղենք աշխարհով մեկ ցրված լինելու հանգամանքից: Առաջարկում եմ Ազգային ժողովում ստեղծել խորհրդակցական կարգավիճակ ունեցող սփյուռքահայերի պալատ, որը կլինի սփյուռքի մեր հայրենակիցներից կազմված մարմին: Այն սփյուռքի համայնքները ՀՀ-ում ներկայացնելով՝ գործուն կերպով կնպաստի հայ ժողովրդի տարբեր հատվածների հայաստանակենտրոն սեւեռմանը: Այդ նույն սփյուռքահայերը կլինեն նաեւ հայ համայնքների դեսպանները մայր հայրենիքում: Եթե սփյուռքի մեր հայրենակիցներին հորդորում ենք գալ, հայրենիքում ներդրումներ անել, զարգացնել Հայաստանի տնտեսությունը, ապա պարտավոր ենք, իմ կարծիքով, նրանց համար ստեղծել վստահության եւ ներգրավվածության լայն դաշտ: Սփյուռքահայությունը պետք է մասնակցություն ունենա մեր երկրի, մեր ժողովրդի համար բախտորոշ խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Նրանք էլ իրենց ներկայացրած երկրների օրենքներն ու փորձը կներկայացնեն: Սփյուռքահայերի պալատ ստեղծելով Հայաստանի խորհրդարանում՝ միաժամանակ կլուծվի շատ կարեւոր հարց, այն է՝ կունենանք հնարավորինս ընդհանրական կարծիք մեր ազգային խնդիրների վերաբերյալ: Սա իրականացնելու համար պետք է նկատի ունենալ երկքաղաքացիության օրենքը, ինչպես նաեւ պետք է նպաստենք նման օրենքների ընդունմանը հայաթափ մյուս երկրներում, մասնավորապես Վրաստանում: Հասկանում եմ, որ այս գաղափարը իրականության վերածելու համար անհրաժեշտ կլինի կատարել սահմանադրական կամ օրենսդրական փոփոխություններ, մշակել մեխանիզմներ ու ահռելի կազմակերպչական աշխատանք կատարել, սակայն վստահ եմ, որ վերջնարդյունքը կարդարացնի ջանքերը»: ***ՀԱՅԿ ՍԱՆՈՅԱՆ, 2009 թվական, հունիսի 9***

Հակասական կարծիքներ երկպալատ խորհրդարանի մասին

Երեկ ասուլիսասրահներում ակտիվորեն քննարկվում էր երկպալատ խորհրդարան ունենալու գաղափարը: ՀՀԿ-ից **Հովհաննես Սահակյանը** այդ գաղափարը դեռ ընդամենը միտք համարեց, որը հետագա քննարկումներում կբացվի, նրա նպատակները հասկանալի կդառնան: ԱՊՀ ինստիտուտի հայկական ներկայացուցչության ղեկավար **Ալեքսանդր Մարկարովը** նկատել է, թե երկպալատ խորհրդարանները դաշնային հանրապետություններում են գործում, որտեղ անհրաժեշտություն է ծագում ներկայացնելու փոքրամասնությունների շահերը, մանավանդ՝ այդ գաղափարը Հայաստանում սահմանադրության հետ հակասություն ունի, եւ պատգամավոր կարող է դառնալ 5 տարի անընդմեջ Հայաստանում ապրած մարդը: Նախկին պատգամավոր **Հմայակ Հովհաննիսյանը** հիշել է, որ երկպալատ խորհրդարանի գաղափարն առաջին անգամ բարձրաձայնվել է 2007 թվականին, դա նրա կարծիքով արդյունավետ օրենսդրական մեխանիզմ կլիներ: Ըստ ՀՀԿ-ական մի ուրիշ պատգամավոր **Արտակ Դավթյանի**՝ հարցը դեռ երկարատեւ քննարկումներ է պահանջում, նույնիսկ վաղ է մտածել, թե դա կարող է անպայման իրականանալ, այնպես որ տրամաբանական է, որ հայկական ամենամեծ ու «կայացած» գաղթօջախում՝ Կալիֆոռնիայում է արվել նման հայտարարություն: ԼՂՀ նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանն** այս կարծիքի է. «Եթե դա միայն սփյուռքի նախարարի որոշումն է, ուրիշ բան, բայց եթե կուսակցության որոշումն է, լրիվ այլ հարց է: Ե՞րբ է սա քննարկվել եւ ի՞նչ նպատակներով: Եթե ծերակույտի ներկայացուցիչները տարեկան 1 միլիոն դրամ վճարեն իրենց պաշտոնի համար, դա արդեն հասկանալի կլինի. սա բյուջե գումար մտցնելու տարբերակ կլինի... Նման հայտարարություն անել՝ առանց Հայաստանի հասարակությանը տեղեկացնելու, վաս ավանդույթ է ու լավ բանի չի հանգեցնի»:

«Ժառանգության» պատգամավորներից **Արմեն Մարտիրոսյանը** իշխանության շրջանառության մեջ դրած գաղափարի տակ հայ-թուրքական արձանագրությունների առումով սփյուռքի հակազդեցությունը չեզոքացնելու նպատակ տեսավ. «Ներկա պայմաններում սփյուռքին Հայաստանում ընթացող գործընթացներում ներգրավելու համար կան մի շարք եղանակներ, որոնք կարող է կիրառել իշխանությունը: Սակայն քանի որ մեզ մոտ իմիտացիան ամենաընդունված գործելաոճն է, ուստի երկպալատ խորհրդարանի գաղափարն էլ այդ իմիտացիոն գործընթացների շարքից է»: Մ. Խ.

Ցավակցություն

«Ազգ»-ի խմբագրությունը վշտակցում է Ռուզան Պետրոսյանին՝
իր սիրելի մոր՝
Վարդանուշ Պետրոսյանի
մահվան կապակցությամբ:

ԱԶԳ

Կիսված Կիպրոս

Հյուսիսային Կիպրոսում ժամանակին ծաղկուն հանգստավայր ու նավահանգիստ Կիրենիան, որ այսօր նաեւ թուրքերեն տարբերակով Գիրնե է կոչվում, դեռեւս պահպանում է մի քանի տասնամյակ առաջ ունեցած գրավչությունը, սակայն Հարավային Կիպրոսի նմանատիպ մի հանգստավայրի՝ Լիմասոլի համեմատությամբ Կիրենիան մարող «կենդանություն» ունի, քանի որ Լիմասոլում անգամ կուրորտային սեզոնից դուրս զբոսաշրջիկների թիվը պակաս չէ, ու ամենուր ընթացող շինարարությունն էլ վկայում է տնտեսական այլ ցուցանիշների մասին:

1974-ից ի վեր երկու մասի բաժանված Կիպրոսում գրեթե ամեն ինչ զգալի տարբերություն ունի Հյուսիսի եւ Հարավի միջեւ: Տարբերություններով հանդերձ՝ գոնե մեկ հարցում միասնական են ինչպես թուրք կիպրացիները, այնպես էլ հույն կիպրացիները. այլեւս պատերազմ ու արյունահեղություն որեւէ նպատակի համար չի ցանկանում ոչ ոք:

Արդեն հինգ տարի Կիրենիայի կամ, ինչպես ինքն է ներկայանում, Գիրնեի բնակիչ դարձած Ալին թուրքական գրականություն ուսումնասիրելու համար Թուրքիայից հասել է Հյուսիսային Կիպրոս, բուն ընդունվել: Քսանյոթամյա (երբ իմացավ, որ զրուցակիցը հայ է, միայն այդ ժամանակ մինչ այդ թուրք ներկայացող երիտասարդը ընդգծեց, որ թուրք չէ, այլ քուրդ - Ա.Հ.) քուրդ երիտասարդի համար, որը Ուրֆայից (Թուրքիա) հասնելով Կիրենիա՝ կրթությանը զուգահեռ նաեւ մերձափնյա սրճարաններից մեկում մատուցող է աշխատում, Հյուսիսային Կիպրոսն ավելի գրավիչ ու հարմար է, քան Թուրքիան: Իսկ թե ինչ կլինի կղզու ճակատագիրը եւ ինչպիսին է ապագան, Ալին առանձնակի չի հուզում, միայն թե խաղաղ լինի:

Հարավային Կիպրոսի Լառնակա քաղաքում ծնված Մուսա Քյուշուքը իր կյանքի հիսունհինգ տարիներից մեծագույն մասն անց է կացրել Հյուսիսային Կիպրոսում՝ 1974-ի իրադարձություններից հետո թողնելով Լառնական: Երեք որդի ունի եւ մի թոռնիկ՝ փոքրիկ Մուսան:

Նրա խոսքերով, իր եւ կնոջ եղբայրներին, որոնք «զինվորներ չեն եղել», սպանել են հույները, ու չնայած Մուսան չի ցանկանում առանձնակի շփվել հույն կիպրացիների հետ, բայց կղզին բաժանված տեսնել էլ չի ցանկանում: Մուսայի կարծիքով, հույն եւ թուրք կիպրացիները կարող են լինել միասին, բայց միայն կողք կողքի, այլ ոչ առաջվա նման խառը: «Պատերազմն իր դառնություններն ունի, ու թեեւ վրեժխնդիր լինել չեմ ուզում, բայց հույների հետ առաջվա նման հարեւան չեմ կարող լինել», ասում է Մուսան: Միայն մեկ անգամ է Մուսան այցելել իր ծննդավայր, երեք-չորս տարի առաջ, բայց ոչ իր տունն է գտել, ոչ հարեւաններին:

Հյուսիսային Կիպրոսի քաղաքացիությունը բուլղարականին զուգահեռ ընդունելով՝ հիսնամյա Ալի Բոզողուլուրը ընտանիքով 1992-ին եկել էր Հյուսիսային Կիպրոս հյուր, բայց մնացել է մինչ օրս: Գոհ է իր կյանքից եւ ուրախ կլիներ, եթե Կիպրոսի հարցը լուծվել: Իսկ թե այդ հարցի լուծումն ինչպես կարող է լինել Հյուսիսային Կիպրոսում թուրքական մեծաթիվ զինուժի առկայության պարագայում՝ բուլղարացի թուրքը ոչինչ ասել չի ուզում. «Դա իմ գործը չէ, ես այստեղ եկել ու աշխատում եմ ընտանիքով, եւ միակ բանը, որ հասաս գիտեմ, դա խաղաղություն ունենալն է»:

Կիպրոսի ներկայիս նախագահ Դիմիտրիս Քրիստոֆիասի եւ 2005-2010թթ. Հյուսիսային Կիպրոսի առաջնորդ Մեհմեդ Ալի Թալատի հայրենիք հանդիսացող Կիրենիայի բնակչության մեծամասնությունը ոչ թե թուրք կիպրացիներն են, այլ Թուրքիայից ժամանածները: Բացառություն չէ նաեւ Սաբրին, որ արդեն տասնմեկ տարի ռուս կնոջ հետ Թուրքիայից անցել է Հյուսիսային Կիպրոս ու գոհ ապրում է այնտեղ:

Քսանութամյա Սաբրին վստահեցնում է, որ Կիրենիայում իր աշխատանքն ավելի լավ է վարձատրվում, չնայած ըստ տեղեկություններ՝ «հունական կողմում վիճակն ավելի լավ է»: «Որպես Թուրքիայի քաղաքացի ես չեմ կարող անցնել հունական հատված, բայց թուրք կիպրացիները նախընտրում են հաճախ լինել Հարավային Կիպրոսում», վստահեցնում է Սաբրին եւ կանխատեսում, թե Հյուսիսային Կիպրոսում առնվազն մի հինգ տարուց ճգնաժամ կլինի այն դեպքում, երբ Հարավում կյանքը ծաղկում է (Կիպրոսի հունական հատվածի մասին պատկերացումները թուրքերի մեջ զգալի թերի էին, քանի որ թուրք զրուցակիցները ընդգծված հետաքրքրությամբ փորձում էին տեղեկանալ, թե ինչպիսին է հունական հատվածը, որտեղ է ավելի լավ եւ այլն):

Դուռ-դռան հարեւան լինելու ժամանակները անցել են

Հյուսիսային Կիպրոսից հարավային անցումը Եվրոմիության միակ բաժանված մայրաքաղաքի՝ Նիկոսիայի (թուրքական տարբերակում՝ Լեֆկոսա) կանաչ գոտով իսկապես բավականին հեշտ է դարձել, բայց ոչ Թուրքիայի քաղաքացիների համար: Գրեթե երեսուն տարի փակ բուֆերային գոտու մի հատվածը՝ կանաչ գոտին հատելու արգելքը հանվեց միայն 2003-ի ապրիլին՝ հնարավոր դարձնելով Նիկոսիայի Լեդրա փողոցով անցումը մի կողմից մյուսը, ընդ որում, առանց անձնագրում որեւէ կնիք դնելու, այլ միայն առանձին վիզա լրացնելու միջոցով: Օտարերկրացու համար էլ Նիկոսիայի մի հատվածից մյուսն անցնելը մի քանի րոպեի գործ է, միայն, եթե օտարերկրացին Կիպրոսում հայտնվել է հունական կողմից, այլապես մուտքը Կիպրոս համարվում է անօրինական, ինչն էլ տեղի ունի Թուրքիայի քաղաքացիների դեպքում:

Հույն կիպրացի քառասունամյա Ադրասոսի մոտեցմամբ, Կիպրոսը պետք է միասնական լինի: «Մենք միասին ենք ապրել ու ոչ մի խնդիր չի եղել մինչեւ թուրքական ներխուժումը», ասում է Ադրասոսը: Նա վստահ է, որ Նիկոսիայի իր թուրք կիպրացի հարեւանները դեռ կվերադառնան ճիշտ այնպես, ինչպես Հյուսիսային Կիպրոսի իրենց հայրենի տները կվերադառնան հույն կիպրացիները, սակայն դա ե՞րբ հնարավոր կլինի՝ հույն կիպրացին չի կարող ասել:

Վաթսունն անց Ալեքսիսի պարագայում հիշողություններ կան, թե ինչպես էին հույնն ու թուրքը ապրում միասին, առանց խնդիրների, բայց ավելի քանի երեսուն տարի առաջ տեղի ունեցածը անջրպետ է դարձել երկու ժողովուրդների շփման համար: «Ես հարեւան թուրք ունեի, ու շատ մտերիմ էինք: Բայց իմ հարազատներից կային, որ ապրում էին թուրքական կողմում ու Թուրքիայի ներխուժումից հետո հազիվ փախան», հիշում է Ալեքսիսն ու հուզվում. «լավ, դուռ դռան հարեւան լինելու ժամանակներն էլ չեն վերադառնա, ես դա գիտեմ», առանց տեղյակ լինելու՝ այս հարցում իր թուրք կիպրացի հայրենակիցների հետ համակարծիք է թուրքերենին ու հունարենին հավասարապես տիրապետող տիկինը:

Հունական կողմի ընդհանուր դիրքորոշումը, թե Կիպրոսի խնդրի լուծումը երկու համայնք, երկու գոտի ունենալն է՝ համադաշնության ձեւաչափով, ընդունելի է երիտասարդ Լիոնիդասի համար, որ Լիմասոլում փոքրիկ խանութ ունի: Նրա խոսքերով, խնդիրը կարելի է լուծել նաեւ, եթե ավելի շատ թուրք կիպրացիներ տեսնեն ու զգան այն զարգացումը, որ կա հունական կողմում: «Լավ ապրել ուզում են բոլորը, իսկ լավ ապրել մենք կարող ենք միասին՝ Եվրոմիության կազմում», ասում է տուրիստական այս քաղաքի բնակիչը: Լիոնիդասի մեկնաբանությամբ, միակ խոչընդոտը Թուրքիան է, որ թույլ չի տալիս նախկին բարեկամ-հարեւաններին կրկին լինել միասին:

2004 թ. մայիսի 1-ից Եվրոմիության անդամ դարձած Կիպրոսի թուրքական օկուպացիայի տակ գտնվող տարածքներում ԵՄ օրենքներն ու նորմերը, ըստ պայմանավորվածության, չեն տարածվի այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չէ բաժանված կղզու հարցը: Իսկ թուրքական հատվածի 1974 թ. ինքնահռչակ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» ցայսօր ճանաչել է միայն Թուրքիան:

Բուֆերային գոտու կյանքը՝ գրեթե 15 տարի առանց բռնության

1974-ին Թուրքիայի՝ Հյուսիսային Կիպրոս եւ առաջինը՝ Կիրենիա ներխուժումը, որ միջազգային հանրության գնահատականով է նման որակում ստացել, հանգեցրել է Կիպրոսի տարածքի ավելի քան 36 տոկոսի զավթմանը: Սակայն դրանից առաջ, դեռեւս 1963-ին համայնքների միջեւ տեղի ունեցած բախումներից հետո կղզում արդեն հայտնվել էին ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը: Այդ ուժերը այսօր էլ հսկում են կղզու երկայնքով 180 կմ ձգվող բուֆերային գոտին, որ մոտ երեք մետրից մինչեւ 7,5 կմ լայնություն ունի: ՄԱԿ-ի դերակատարությունը չի սահմանափակվում խաղաղապահ ուժերով:

Կիպրոսի հարցի լուծման ներկայիս բանակցությունները եւս ընթանում են ՄԱԿ-ի հովանու ներքո: Հունվարի 26-ին էլ Ժնեւում Բան Կի Մունի հրավերով բանակցությունների սեղանի շուրջը նստած Կիպրոսի նախագահ Դեմետրիս Խրիստոֆիասն ու թուրքական հատվածի առաջնորդ Դերվիշ Էրողլուն, ըստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, առաջընթաց են գրանցել: Միեւնույն ժամանակ, լուրջ տարբերություններ կան, որ դեռեւս համաձայնեցված չեն:

Այդուհանդերձ, Կիպրոսում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Լիսա Բաթերհայմի ներկայացմամբ, ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը նորմալացնում են իրավիճակը, որ պահպանվում է առանց հրադադարի ստորագրված համաձայնագրի: Բուֆերային գոտին, ըստ Բաթերհայմի, դառնում է ամայի, մինչդեռ ՄԱԿ-ը ընդլայնում է իր ջանքերի ներդրման շրջանակները: Ու չնայած կողմերի անհամաձայնություններին, ըստ ՄԱԿ-ի ներկայացուցչի, կան ոլորտներ, որտեղ կողմերը հաջող համագործակցություն են ծավալել. դա վերաբերում է ինչպես հանցագործությունների դեմ պայքարին, այնպես էլ, օրինակ, 1964-1974թթ. անհետ կորածների որոնման աշխատանքներին:

Ինչ վերաբերում է, ըստ հունական կողմի, ավելի քան 40000 թուրքական զինուժի ներկայության բնութագրին, ապա Բաթերհայմը որեւէ որակում չի տալիս, միայն հավաստիացնում է, որ աշխատանքները տարվում են այդ զինուժը կղզուց հանելու ուղղությամբ:

ռային գոտում բռնության դրսեւորումներով բախումներ չեն գրանցվել, ու թեեւ «երկու համայնքների միջեւ վստահության պակասի պատճառով լինում են լարվածություններ, բայց երկու համայնքներն էլ հարգանքով են վերաբերվում ՄԱԿ-ի խաղաղապահներին»:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրն էլ, ըստ Կիպրոսում ծրագրի ղեկավար Յակո Սիլիերսի, ընդհանուր առմամբ բարեկեցիկ բնակչություն ունեցող Կիպրոսում զարգացման ծրագրեր չէ, որ անում է, այլ կենտրոնացած է երկու հարեւանների մերձեցման ու համագործակցության զարգացման վրա: ՄԱԿ-ի ԶԾ-ի նախագծերից Կիպրոսում հատկապես կարեւոր են մանուլի հետ աշխատանքները, քանի որ վերջինս ուզած ձեւով կարող է ազդել հաշտեցման վրա: Եվս մեկ ուղղություն վերաբերում է քաղաքական գործիչների, գիտնականների հետ աշխատանքին, որպեսզի վերջիններս փոխշփման եզրեր փնտրեն ու զարգացնեն: Աշխատանքի եւս մեկ ոլորտ էլ երիտասարդներն են, որոնք մեծացել են՝ առանց մյուս համայնքի հետ շփումների:

Սիլիերսը վստահեցնում է, որ երկու համայնքների ատելության, միմյանց հետ անհաշտ լինելու մասին շատ է գրվում եւ ֆիչ՝ համատեղ ապրելու մասին: Եվ այստեղ է, որ երկու համայնքների ներկայացուցիչներն էլ, ՄԱԿ-ի ԶԾ-ի ներկայացուցչի խոսքերով, օգտագործում են պատմությունը՝ ներկայացնելու ամեն բացասականը: Իսկ համատեղ ապրելու մոտեցումը չի զարգանում, քանի որ երկու համայնքներն էլ մնացել են 1974-ի իրականության մեջ: «Կիպրոսում նեգատիվ խաղաղություն է. ոչ ոք չի սպանվում, բայց խաղաղ համատեղ ապրելու խոչընդոտներն էլ շատ են»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նիկոսիա-Կիրենիա-Լիմասոլ-Երեւան

Հ.Գ. *Կիպրոս այցելությունն իրականացվել է European Neigbourhood Journalism Network ծրագրով՝ մի խումբ հայ եւ ադրբեջանցի լրագրողների մասնակցությամբ:*

Կիպրոսում «նեգատիվ խաղաղություն» է

Նախկինի պես թե նորովի, բայց Թուրքիայի զինուժը, ամեն դեպքում, պետք է հեռացվի Կիպրոսի հյուսիսից

ԱԶԳ

Միջազգային

«Կարգավորում»՝ ըստ Միխայիլ Լեոնտեւի

Արցախյան իրադարձությունների պատմությունը, ի թիվս իրավաքաղաքական անտրամաբանությունների, որ շռայլորեն մատուցում էր խորհրդային կենտրոնական իշխանությունը, արձանագրել է նաեւ այս անեկդոտը. «Մոսկվայի գործարաններից մեկի բանվորները հեռագրում են ԽՄԿԿ Կենտկոմ. «Իսկ չե՞ն կարող հայերն ու ադրբեջանցիները միանալ եւ էդ ղարաբաղցիներին մի լավ դաս տալ»: Խորհրդային բնորոշ մտածողություն՝ երբ խոսվում է մի հարցից, որի մասին ոչ ոք կարգին տեղյակ չէ, բայց բոլորն ուզում են, որ լուծվի:

23-ամյա վաղեմության այս անեկդոտը հիշեցի՝ ծանոթանալով «Օսանկինո»-ի մեկնաբան Միխայիլ Լեոնտեւի հարցազրույցին, որ նա տվել է Vesti.az-ին: «Իսկ այժմ ես կպատմեմ, թե ինչպես կարելի է լուծել այդ (Ղարաբաղյան-Վ. Ա.) հարցը: Ուղղակի մեկ, երկու, երեք: Եղել է մի երկիր, ուր այդ հարցը չի ծագել: Ճի՞շտ է: Եվ սա միակ հարցը չէ, որ ներկայումս կա, սակայն առաջ չէր ծագել: Մենք մի երկիր ունեինք: Ահա եւ մնում է երկուսից մեկը. կամ մենք հեռ ենք վերադառնում եւ նորմալ երկիր ենք վերականգնում, որում այդ հարցերը լուծելի են, կամ սպանում ենք իրար: Այլ կառուցողական առաջարկություններ չկան»,- այսպես է խնդրի կարգավորումը ներկայացնում Լեոնտեւը:

Ցավն այն չէ, որ մասնավոր անձ Լեոնտեւն է այսպես դատում: Եթե նա լիներ անձնական տեսակետ կրող, ապա ադրբեջանցի լրագրողը Մոսկվայով մեկ նրան հանդիպելու հազարումի հնարք չէր գործադրի: Դե, հասկանալի է, հո Լեոնտեւն ինքը չի՞ գտել բախվեցի Համիդ Համիդովին, որը Ռուսաստանի մայրաքաղաք ուսանելու է մեկնել: Նշանակում է՝ ադրբեջանցիներին Լեոնտեւի տեսակետը հետաքրքրել է որպես ռուսական իրականության մեջ առկա հանրային եւ, ինչու չէ, քաղաքական տրամադրությունների դրսեւորում:

Տվյալ դեպքում, ամենայն հավանականությամբ, ադրբեջանցիները «նորմալ երկրի վերականգնմամբ» շահագրգռված չեն: Նրանց խնդիրն այն է, որ տեղեկատվական հոսքերում ընդգծվի, որ «եղել է մի ժամանակ, երբ այդ՝ ԼՂ հարցը չի ծագել»: Մնացածը ոչ Համիդովին է պետք, ոչ էլ հարցազրույցի պատվիրատուներին: Ամբողջ իմաստն այն է, որ «եթե այդ հարցը մի ժամանակ չի ծագել, ուրեմն այսօր գոյության իրավունք չունի, իսկ ինչ որ չկա, դրա շուրջը երկար-բարակ խոսակցություններն էլ ավելորդ եւ անիմաստ են»:

Լեոնտեւի տրամադրվածությունն, անշուշտ, այլ է: Բայց նա ակնհայտորեն սխալվում է, երբ կարծում է, թե «փոքր խնդիրների անտեսմամբ» հնարավոր է ստեղծել այն ընդհանուր միջավայրը, որի մասին ինքն է երազում: Այդպես չի լինում: Այդ սխալն, ի դեպ, թույլ էր տալիս Միխայիլ Գորբաչովը, երբ շեշտը դնում էր միութենական հանրապետությունների «իրական սուվերենության» վրա: Հավանաբար, հենց այդ պատճառով էլ նրան չհաջողվեց «նորացնել Խորհրդային Միությունը»: Որովհետեւ երբ կենտրոնական կառավարությունն սկսեց երկյուղել հանրապետությունների անջատողականությունից եւ փորձեց «փոքր հարցերն անտեսելով» նրանց «գին վճարել», ապա նույն պահին էլ վերջիններս համոզվեցին, որ «կենտրոնը մեռած է, եւ ոչ մի վերակենդանացում նրան չի օգնի»:

Ըստ էության, Լեոնտեւն Ադրբեջանին առաջարկում է «հայացքը շրջել դեպի հյուսիս», որի դեպքում «այդ հարցը չի լինի»: Ե՛վ հարցազրույց վարողը, ե՛ւ նրա «վիզավին» այս պարագայում խաղում են «հնարավորության բարակ լարի վրա»: Կարեւոր չէ, որ «հնարավորություն» ասվածը նրանք տեսնում են «սեփական տան կտուրից»՝ ամեն մեկն իր դիտանկյունից:

Բայց Միխայիլ Լեոնտեւն իրականում հազիվ թե տեղյակ չէ, որ ԼՂ հարցը միշտ էլ եղել է: Դա նույնիսկ խորհրդային ղեկավարներն ու Ադրբեջանի հանգուցյալ նախագահ Հեյդար Ալիեւն են խոստովանել: Եվ այսօր իմաստ չունի ակնարկել, որ «նորմալ երկիրը» փլուզվել է այն պատճառով, որ դրա մասին սկսել են խոսել: Ընդհակառակը, երկիրը նորմալ կլիներ, եթե կարողանար լուծում գտնել իր իսկ ստեղծած հարցին:

Այդման քաջություն խորհրդային իշխանությունը չունեցավ: Հարցն այն չէ, որ նա խնդիրը պիտի լուծեր բացառապես այն կերպ, ինչպես հայերս էինք ուզում: Թեեւ դա հնարավոր էր: Երկիրն ուղղակի իրավունք չուներ հարցը թողնել առկախ: Եվ այսօրվա միջնորդությունն էլ գործում չէ, եթե խոսվում է, թե «Ադրբեջանը եւ Հայաստանը թող համաձայնության գան, մենք կլինենք երաշխավոր»: Ոչ թե այն պատճառով, որ լուծումները գտնվում են «պարտադրանքի հարթությունում», այլ՝ որ նման դեպքերում, իրոք, ուրիշի դժբախտություն չի լինում:

Բռնության սպառնալիքի հաստատեսերը միջազգային հանրությունն է: Այս իմաստով, ահա, Լեոնտեւի «լուծման տարբերակը» բռնության սպառնալիքն օրինականացնում է: Հանուն ինչի՞: Պատասխան չկա: Դրա համար էլ այդ «ճանապարհը տաճար չի տանում»:

Մարդկության պատմությունն ստույգ վկայում է, որ բռնությամբ միավորման բոլոր փորձերը ձախողվել եւ ձախողվում են: Իրական կյանքը չի տվում քաղաքագիտական կոնստրուկցիայի, նույնիսկ եթե դրա հեղինակը Զբիգնեւ Բժեզինսկին է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Սիեփանակերտ

Բելառուսը կպատասխանի, իսկ Ռուսաստանը քննադատում է

Բելառուսը ոչ Եվրամիության, ոչ ԱՄՆ-ի հետ առճակատում չի ցանկանում: Ըստ բելառուսական ԱԳ նախարարության, պաշտոնական Մինսկը չի ցանկանում առճակատում, եւ այդ համատեքստում էլ միայն պատասխան քայլեր կձեռնարկի իր դեմ կիրառվող պատժամիջոցների առնչությամբ: «ՌԻԱ Նովոստի»-ն տեղեկացնում է, որ Բելառուսի փորձագետները ամենայն մանրակրկիտությամբ եւ ուշադրությամբ վերլուծում եւ գնահատում են ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի արգելափակումները, որոնց հիման վրա էլ կարվեն պատասխան քայլեր:

Բելառուսը, ԱԳՆ-ի հայտարարությամբ, կողմ է ԵՄ-ի հետ երկխոսությանն ու համագործակցությանը: Միեւնույն ժամանակ, Բելառուսի արտաքին քաղաքականությունը չպետք է, ըստ Բելառուսի իշխանությունների, դիտարկվի որպես ոչ անկախ, քանի որ բխում է միայն բելառուսական քաղաքացիների շահերից:

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է, որ հունվարի 31-ին 158 պաշտոնյա «անցանկալի» են հայտարարվել ԵՄ-ի եւ Միացյալ Նահանգների համար, սառեցվել են եվրոպական բանկերում գտնվող նրանց հաշիվները: Միացյալ Նահանգները նաեւ արգելափակել է համագործակցությունը բելառուսական մի շարք ընկերությունների հետ: Եվ այդ ամենը դեռեւս դեկտեմբերին Բելառուսում տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքների կեղծման պատճառաբանությամբ:

Բելառուսական արձագանքին զուգահեռ Ռուսաստանի արտգործնախարարությունը եւս արտահայտվել է ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի պատժամիջոցների առնչությամբ՝ քննադատելով դրանք: Ռուսաստանի արտաքին գերատեսչությունը Բելառուսի նկատմամբ նման պատժամիջոցների կիրառումը ոչ արդյունավետ է որակել, ինչը կարող է խախտել Բելառուսի սոցիալ-տնտեսական կայունությունը:

Ա. Հ.

Սուրինամը ճանաչեց Պաղեստինը 1967-ի սահմաններով

Հարավամերիկյան երկիր Սուրինամի իշխանությունները ճանաչել են Պաղեստինի ապագա պետությունը 1967-ի սահմաններով: Այդ մասին լրագրողներին հայտարարել է Պաղեստինյան ինքնավարության արտգործնախարար Ռիադ ալ Մալկին: Նրա խոսքերով, Սուրինամի նախագահ Դեզի Բուտերսը Բրազիլիայում պաշտոնավարող պաղեստինցի դեսպանի միջոցով համապատասխան նամակ է փոխանցել Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբբասին:

Պաղեստինյան Maan գործակալության տվյալներով, Սուրինամի նախագահը այդ նամակի պատճենը ուղարկել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին:

Փետրվարի 2-ի դրությամբ Պաղեստինի պետությունը ճանաչել են Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Վենեսուելան, Գայանան, Պարագվայը, Պերուն, Սուրինամը, Ուրուգվայը, Չիլին եւ Էկվադորը: Իսրայելի հետ գործընկերային հարաբերություններ պահպանող Կոլումբիան առայժմ չի ճանաչել «անկախ Պաղեստինը»:

Բացի հարավամերիկյան երկրներից, Պաղեստինի պետության ճանաչման մասին հայտարարել են նաեւ Կիպրոսի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը (վերջինս՝ դեռ ԽՍՀՄ-ի օրոք):

ԵԳԻՊՏՈՍ

Օբամա. «Մուբարաքը պետք է անհապաղ սկսի իշխանության փոխանցումը»

Երեկ «Ազգը» գրեց, որ փետրվարի 1-ին Կահիրեում մոտ 1 միլիոն ցուցարարներ պահանջել են նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականը, ազատ եւ արդար ընտրություններ, ժողովրդավարական բարեփոխումներ: Ֆրանսպրեսի տվյալներով, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Սուեզում բողոքի ցույցերի մասնակիցների ընդհանուր թիվն անցել է 1 միլիոնից:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նույն օրվա երեկոյան 82-ամյա նախագահ Մուբարաքը իր հեռուստաելույթում ժողովրդին խոսացել է (30 տարի իշխելուց հետո) չմասնակցել առաջիկա սեպտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններին, ինչպես նաեւ մասնակցության հնարավորություն ստեղծել անկախ թեկնածուների համար: Սակայն, չնայած ժողովրդի պահանջին, փոխնախագահ Օմար Սուլեյմանի, ընդդիմության առաջնորդներից Մոհամմեդ էլ Բարադեյի եւ այլոց հորդորներին, նախագահը անմիջապես հեռանալու մտադրություն չի արտահայտել:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Մուբարաքի ելույթից հետո նրա հետ կեսժամյա հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Դրանից հետո ելույթ ունենալով՝ Օբաման հայտարարել է, որ Մուբարաքը պարտավոր է «անհապաղ սկսել իշխանության փոխանցման գործընթացը»:

Եգիպտացի ցուցարարներին դիմելով՝ Օբաման ասել է. «Մենք լսում ենք ձեր ձայները»: Նախագահի խոսքերով, Եգիպտոսի իշխանության համակարգում վերափոխումները պետք է լինեն էական, խաղաղ եւ անհետաձգելի: Օբամայի կարծիքով, նախագահական ընտրությունները հարկավոր է անցկացնել ոչ թե սեպտեմբերին, այլ ավելի շուտ: Միաժամանակ նա ընդգծել է, որ ԱՄՆ-ը մտադիր չէ միջամտել Եգիպտոսի իշխանափոխության գործընթացին:

ԵՐԵԿ բախումներ տեղի ունեցան Մուբարաքի հրաժարականը պահանջող եւ Մուբարաքի կողմնակից ցուցարարների միջեւ Կահիրեում եւ Ալեքսանդրիայում: Կան շուրջ 500 վիրավորներ:

Իսրայելում դժգոհ են Եգիպտոսի հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումից

Իսրայելի մամուլը եւ քաղաքական գործիչները ակնհայտորեն դժգոհ են արաբական աշխարհում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցը համարվող Եգիպտոսի հարցում ամերիկյան վարչակազմի ներկայիս դիրքորոշումից: Le Figaro թերթը ընդգծում է, որ Իսրայելում շատերը նախագահ Օբամային մեղադրում են «Հոսնի Մուբարաքից շատ արագ երես թեքելու» համար:

«Ձիմի Քարտերը թույլ տվեց Իրանի շահի տապալումը: Օբաման մոտավորապես նույն կերպ է վարվում Մուբարաքի հետ», մասնավոր խոսակցությունների ժամանակ դառնությամբ նշում են իսրայելցի որոշ պաշտոնյաներ: Պաշտոնապես դժգոհություն չի արտահայտվում, բայց զգացվում են որոշակի հուսախաբություն եւ նույնիսկ զայրույթ:

«Մի՞թե կարելի է վստահել ԱՄՆ-ին, եթե ամենափոքր փորձության դեպքում նա լքում է իր ամենահավատարիմ դաշնակցին: Այդպիսով ամերիկացիները կկորցնեն իրենց ազդեցությունը Մերձավոր Արեւելքում», ընդգծում է հրեա պաշտոնյաներից մեկը:

Խորհրդարանի պաշտպանության եւ արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Շաուլ Մոֆազը համանման տեսակետ է արտահայտում: Որոշ լրատվամիջոցներ գրում են, թե «Բարաք Օբաման թիկունքից դաշունահարեց Հոսնի Մուբարաքին»:

Վաղաժամկետ ընտրություններ Իռլանդիայում

Փետրվարի 25-ին Իռլանդիայում անցկացվելու են վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ: Նախապես որոշված էր քվեարկությունն անցկացնել մարտի 11-ին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Փետրվարի 1-ին վարչապետ Բրայան Քոուենը եւ նախագահ Մերի Մակէլիսը ստորագրել են խորհրդարանի արձակմանը վերաբերող փաստաթուղթ, իսկ հետո հայտարարել են վաղաժամկետ ընտրությունների մասին:

Հաղորդվում է նաեւ, որ վարչապետ Քոուենը չի մասնակցելու ընտրություններին: Նա հայտարարել է, որ ինքը թողնում է քաղաքականությունը: Ավելի վաղ նա ստիպված թողել էր «Ֆիաննա Ֆայլ» կուսակցության նախագահի պաշտոնը: Խորհրդարանում իր հրաժեշտի ելույթում Քոուենը խոստովանել է, որ հանուն Իռլանդիայի տնտեսության փրկության ինքը ստիպված է եղել ընդունել տհաճ որոշումներ:

Հանրային հարցումների արդյունքների համաձայն, երկրի քաղաքականության մեջ տասնամյակներ շարունակ առաջատար դիրք գրաված «Ֆիաննա Ֆայլը» արագորեն կորցնում է ժողովրդականությունը: Իռլանդացիները կառավարող կուսակցությանը մեղադրում են պետության տնտեսական ծանր կացության համար:

The Irish Independent թերթի պատվերով անցկացված հարցման տվյալները վկայում են, որ ներկայումս առավել մեծ ժողովրդականություն է վայելում Իռլանդիայի գլխավոր ընդդիմադիր կուսակցությունը՝ «Ֆինե Գելը» (30 տոկոս): Երկրորդ տեղում է Լեյբորիստական կուսակցությունը (24 տոկոս), երրորդում՝ «Ֆիաննա Ֆայլը» (16 տոկոս):

«Ֆինե Գելի» առաջնորդ Էնդա Քենին հայտարարել է, որ վարչապետ դառնալու դեպքում ինքը կձգտի վերանայել այն պայմանները, որոնցով Իռլանդիան վարկ է ստացել ԵՄ-ից եւ ԱՄՀ-ից:

Հունաստանից հետո Իռլանդիան եվրոգոտու երկրորդ երկիրն է, որ չի կարողանում ինքնուրույն կատարել պարտքային պարտավորությունները: 2010-ի նոյեմբերին ԵՄ-ը եւ ԱՄՀ-ն Իռլանդիային հատկացրին 85 միլիարդ եվրո վարկ:

Բյուջեի պակասորդի կրճատման նպատակով երկրի ղեկավարությունը մտադիր է նվազեցնել պետական ծախսերը եւ մտցնել նոր հարկեր: Դրա հետեւանքով կիջնի նվազագույն աշխատավարձի մակարդակը, կիրականացվեն պետծառայողների զանգվածային կրճատումներ:

Խաչիկ Դաշտենցի նոթատետրից

Խ. Դաշտենցը 1970թ.

«Ազգում» արդեն տպագրվել է Նյու-Յորքում ապրող Անահիտ Դաշտենցի հետ հարցազրույցը՝ Խաչիկ Դաշտենցի անձնական կյանքի եւ «Ռանչպարների կանչի» ստեղծման մասին որոշ բացահայտումներով: Գրողի դուստրը նաեւ Խ. Դաշտենցի նոթատետրից մի անտիպ հատված է տրամադրել «Ազգին», որը ներկայացնում ենք ընթերցողին: Կետադրությանը ձեռք չենք տվել, այնպես է, ինչպես նոթատետրում, հարգել ենք դեռեւս մասնագետների ձեռքով չանցած բնօրինակի անձեռնմխելիության պարագան: Հատվածը նկարագրում է Անդրանիկ Օզանյանի զինակից Սմբատ զորավարի մահվան պատմությունը: Սմբատը հայ հայդուկական շարժման առաջին նվիրյալներից մեկն է, զորավար Անդրանիկի զինակիցը, զինվորը, որն անցավ ազատագրական կռիվների թոհուբոհով, տեսավ գաղթ, վտարանդիություն, ապա եւ վերադարձավ հայրենիք՝ ապրելով մինչեւ 1956 թվականը: Կյանքի վերջին տարիներին նա Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնի պահակն էր: Նոթատետրի ձեռագիր այս հատվածը փաստորեն վավերագիր է՝ մեծ զորականի մահվան ու դրան առնչվող գրողի զգացողությունների մասին՝ ի տարբերություն «Ռանչպարների կանչի» վերջին գլուխներից մեկի, «Խենթի կողքին»-ի պատմության, որտեղ արդեն այդ նույն պատմությունը գեղարվեստական ձեւի մեջ է դրված:

ՄԱԲԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուզում եմ «Ազգի» խմբագրությանը տրամադրել մի անտիպ նյութ՝ հորս նոթատետրերից. հուշեր են, նշումներ են Սմբատ զորավարի մասին: Եթե հիշում եք, վերջում երկու գլուխ կա՝ «Զբոսայգու վերակացուն» եւ «Խենթի կողքին»: Այդ նյութի հետ են կապված՝ Սմբատի մահվան հետ... Այնտեղ մի կերպար կա՝ Հայկազյանը: Հետաքրքրական է, այդ հուշագրությունից երեւում է, որ Հայկազյանի կերպարի հետ կապված որոշ մանրամասներ հենց իր՝ Դաշտենցի հետ են եղել: Շատ թեթեւ կրճատումներ եմ արել, ավելի ամփոփ դարձնելու համար: Պահպանված է բնագրի ուղղագրությունը եւ կետադրությունը: Տարընթերցումներն ու անընթեռնելի բառերն առնված են չակերտների մեջ:

Լավագույն մաղթանքներս ձեր «Ազգ» օրաթերթին:

Անահիտ Դաշտենց

Նոթատետր (1955-1956)

1955 թվի նոյեմբերի 27-ին, արեւոս կիրակի, ես, Հովիկ Հաբեթյանը, Մուշեղ Ջաֆարյանը, Ժան Էլոյանը եւ Տիգրանը (Ֆրանսիայից եկած, խասգյուղցի), ինչպես նաեւ Տավրիկը (իր ֆոտո ապարատով) վերցրինք թթու, լավաշ, օղի եւ գինի, խնձոր, տանձ, մանդարին, շոկոլադ, սուջուխ եւ կոնսերվա եւ գնացինք տեսնելու զոր. Սմբատին «Կինո Հայրենիքի» մոտ: Կոնյակ եւ մսեղեն (կոլբասա) չկար խանութներում:

Սմբատը շատ ուրախացավ: Խմեցինք եւ ժամանակ անցկացրինք մինչեւ ժամը 5-ը: Տավրիկը մեզ նկարեց նախ խմբով՝ զորավարի հետ, ապա ինձ՝ Սմբատի հետ: Այնուհետեւ՝ Անդրանիկի եւ Սմբատի նկարները կրծքիս: Ապա՝ Սմբատին առանձին: Սենյակը ցուրտ էր: Փայտ չուներ: Մենակ էր: Հետո մի պառավ եկավ սենյակը հավաքելու: Խմեցինք նաեւ մաճառ, որ զորավարն ուներ:

1956թ.

Մարտի 18-ին երեկոյան, երբ տուն եկա, փոքրիկ աղջիկս, 10 տարեկան Հասմիկը դուռը բաց արավ եւ ասաց. «Պապա, զորավար Սմբատը մեռել է»:

Ո՞վ ասաց:

Գիժ Հովհաննեսը:

Ես փարացա վշտից: Ամբողջ գիշերը չկարողացա քնել: Կարդացի Վ. Փափազյանի «Հետադարձ հայացք» գիրքը: Առավոտ շուտ, երբ դեռ անկողնում էի, Մշեցի Հովհաննեսն եկավ:

Զորավարը մեռա՞վ, պառկած տեղից ասացի ես:

Հա, մեռավ, ոչինչ, բայց փողերս կորան:

Ի՞նչ փող:

Հինգ հազար ռուբլիս: Նրա մոտ էի պահ տալիս իմ փողերը: Չէ՞ որ ես քեզ ասել եմ, որ նա իմ քեռին է:

Ես իսկույն հասկացա, որ Հովհաննեսը սուտ է: Նա պարզապես ուզում էր իմ վկայությունը վերցնել՝ ժառանգությունից գումար պոկելու համար: Ես նեղացա վրան: Նա գնաց:

Արագ հագնվեցի եւ բարձրացա դեպի համալսարանի կողմը: Մեռելատան դուռը բաց էր: Սիրտս արեցի մտնել: Նկուղային սենյակի մեջտեղը մի մահճի վրա ցանցասավանի տակ հանգչում էր մի հաղթանդամ մենավոր մեռել: Չգիտեմ ինչու մտածեցի, որ դա Սմբատ զորավարն էր:

Հարցրի պահակին.

- Քաղաքի երրորդ մասից մահացածի բերե՞լ են ձեզ մոտ:

- Չէ՛: Հա, բերել են: Անունը ի՞նչ է:

- Սմբատ:

- Այդպիսի մեռել չկա մեզ մոտ:

- Զորավար Սմբատ:

- Հա, թե Զորավար Սմբատ ես ասում, մեզ մոտ է: Գուցե սա՞ է, -ասաց նա եւ մոտենալով նրա դեմքից ետ քաշեց ծածկոցը եւ ցանցաշորը:

Նա էր, Սմբատ Զորավարը, պառկած հավերժական քնով: Աննման հայրենասերը: Անդրանիկ փաշայի մարտական ընկերը: Մշեցի քաջ շինականը եւ հերոսական անձը: Տխրությամբ դուրս եկա: Ոչ մի պսակ չկար վրան: Անշուք, անզարդ պառկած էր նա, մոռացված այն սերնդից, որի երջանկության եւ ազատագրության համար էր նա մարտնչել օսմանյան բռնապետության դեմ:

- Ե՞րբ են տանելու թաղելու:

- Վաղը, -ասաց պահակը:

Հետեւյալ օրը, մարտ ամսի 20-ին Առնիստ գյուղացի Մուշեղ Ջաֆարյանը զանգահարեց, որ գնամ պսակ պատվիրելու:

Մինչեւ այդ Խնկանոս Դանիելյանը ասաց, որ նա կտակ է գրել կենտկոմ՝ խնդրելով իրեն թաղել Էջմիածնում: Ասաց, որ նրա խնդիրը հարգված է եւ հանձնարարված է (սոցսովետին) կազմակերպել նրա թաղումը:

Որոշ նկատառումներով ես պսակ չպատրաստեցի: Պսակը հյուսեցի իմ տրամ:

Գնացի Գրիգոր Հովհաննիսյանի մոտ, որ կուլտուրայի մինիստրի տեղակալ էր: Մշեցի, հայրենասեր տղա էր: Դրանից մեկ ամիս առաջ Գրիգորը մի շառաչուն ապտակ էր հասցրել իրենց ամբարտավան աշխատակիցներից մեկին, որի մասին ամբողջ քաղաքն էր իմացել: Ապտակը տվել էր մինիստր (կուլտուրայի) Անդրանիկ Շահինյանի կաբինետում նրա մյուս երկու տեղակալների ներկայությամբ, երբ այդ ամբարտավան մարդը (...) նրան 15 րոպե հայհոյել էր: Գրիգորը հետո ինձ ասաց, որ այդ ապտակը նա տվել էր Ռաֆֆու «Խենթը» եւ «Ջալալեդինը» կարդալուց հետո: Գործը հասել էր մինչեւ Թովմասյանը եւ խոսում էին, որ երեւի Գրիգորին ազատեն պաշտոնից կամ նկատողություն անեն:

Այնուամենայնիվ Գրիգորը, իբրեւ մշեցի, կանչեց շոֆերին եւ պատվիրեց, որ էջմիածին գնան: Ժամը 3-ին մոտ ես եւ նա դուրս եկանք Երեւանից: Նա գնում էր շրջկոմի քարտուղար Գեղամ Պետրոսյանի մոտ «Լենինի կտակը» կարդալու, որ նա իբրեւ պատգամավոր բերել էր XX համագումարից, իսկ ես պետք է մասնակցեի Սմբատի թաղմանը:

Ես գնացի դեպի Ս. Գայանեի վանքը մի փոքրիկ աղջկա ցուցմունքով եւ գտա մի նոր փորված շիրիմ: Մարդ չկար այնտեղ: Հանդիպեց մի կին, կարմիր շորով, որից իմացա, որ Երեւանից մի նշանավոր մարդ են թաղելու այդտեղ:

Ո՞վ է:

Մի տերտեր:

Գուցե սխալ եք:

Չգիտեմ ով է, իսկապես: Ասում են մի նշանավոր մարդ է: Հերոս է:

Զորավար Սմբա՞տն է գուցե:

Հա, հերոս մարդ է, ասում են:

Այդ գեղջկուհին պատմեց Շողակաթի, Հռիփսիմեի եւ Գայանեի վանքերի պատմությունը:

Իսկ որտե՞ղ է «Խենթի» գերեզմանը:

Էստեղ է, -ասաց հայուհին: Նա ինձ ուղեկցեց, գնացինք եւ ի՞նչ.

Սմբատի համար փորված գերեզմանի մոտ տեսանք մի մաքված, հին գերեզմանաքար վրան փորագրված միայն մեկ բառ «Խենթ»: Ինչպես էր, որ չէի նկատել:

Դաշտենցը Մեսրոպ վարդապետ Գրիգորյանի (ներկայում արքեպիսկոպոս) հետ, 1960թ.

Դաշտենցը Արամ Ինճիքյանի հետ՝, Աղվերանում 70-ական թ.թ.

Մի գառնարած անցավ մեր մոտով, ուզեցի սուգել.

Զորավար Սմբատն է թաղվելու այդտեղ, -ասաց նա:

Ուրեմն ճիշտ է, որ այս գերեզմանը նրա համար է փորված:

Այո: Նրա համար է:

Ե՞րբ են բերելու:

Ժամը 5-ին:

Երեւաց Գրիգոր Հովհաննիսյանի մեքենան, որ գալիս էր իմ տեսակից: Հովհաննիսյանը եկել էր լճի մոտ շրջագայելու: Շոֆերին ուղարկել էր իմ տեսակից: Նա «Լենինի կտակը» չէր գտել: Գեղամ Պետրոսյանն էլ շրջանի գյուղերն էր գնացել:

Գրիգորի ամբողջ նպատակն էր անպայման ինձ հետ ներկա լինել Զորավարի թաղմանը, բայց հեռվից, որովհետեւ կարծում էր, թե կարող են հանկարծ արտասահմանի թերթերում գրել այդ մասին:

Գնացինք ճաշի: Ճանապարհին հանդիպեց շրջկոմի [...] Արամ [...], որ մոտ ծանոթ էր Գրիգորին եւ հաշվվում էր նրա ցանցի աշխատող:

Նա մեզ տարավ մի ճաշարան, ուր մենք ճաշեցինք, որից հետո նորից գնացինք լճի եզերքը: Ես համոզում էի Գրիգորին, որ պետք է մնալ: Իսկ նա էլ, անկեղծորեն, ուզում էր մնալ:

Գնացինք մի փիչ Ս. Գայանե վանքի շրջապատը մաղ գալու: Այնտեղ մի 7-8 մարդ էր հավաքված: Նստած էին գերեզմանի մոտ հին շիրիմների վրա եւ վանքի պատի տակ: Դրանցից մեկը սեւադեմ, մազոտ երեսներով մի մարդ էր, որ Անդրանիկի վրա ժամանակին մահափորձ էր հանձն առել կաշառքով: Բայց հենց որ Անդրանիկին տեսել էր, ձեռքը թուլացել էր եւ ետ էր կանգնել իր դավադրությունից: Այդ մարդը նույնպես այնտեղ էր եւ խղճի խայթ էր զգում: Եկել էր Սմբատի թաղմանը: Լուռ էր, ոչինչ չէր խոսում: Մենք նորից վերադարձանք լճի ափը: Մաղ եկանք: Լսվեց թաղման սգահանդեսի նվագի ձայնը: Բերում էին: (...) եւ Գրիգորը մնացին, իսկ ես շտապեցի հուղարկավորությանը:

Մեծ բազմություն կար: Դագաղը բերվում էր ձեռքերի վրա, ամբողջ եկեղեցական դասի մասնակցությամբ: Կաթողիկոսի տեղապահը (Կաթողիկոս Վազգեն Ի-ը գտնվում էր արտասահմանում) ճառ ասաց գերեզմանին, վեր հանեց նրան իբրեւ մեծ հայրենասերի, ազգասերի, զորավար Անդրանիկի ընկերոջ եւ զինակցի: Մեջբերում արավ նրա Անդրանիկի հուշարձանի բացմանը արտասանած ճառից:

Ջերմորեն խոսեց նաեւ Ֆրանսիայից եկած մի ընկեր, որ նրան ճանաչում էր: Նաեւ մի կին: Պսակներ քիչ կային այդ մեծ մարդու վրա:

Մտանք Զվարթնոց եւ ժամը 6-ին հասանք Երեւան:

Այսպես ուրեմն՝ Սմբատ Զորավարը թաղվեց 1956 թվի մարտ ամսի 20-ին, երեքշաբթի օրը երեկոյան ժամը 5-ին: Ես մոտիկից, իսկ Գրիգոր Հովհաննիսյանը հեռվից (լճի ափից) կաշկանդված դիտում էինք այդ հերոս մարդու թաղումը մեր աչքում եւ ուրտում ահավոր արցունք, կսկիծ եւ ցավ:

Այդ նույն օրը ես մի փոքրիկ բանաստեղծություն գրեցի: Տես իմ ալբոմը:

1956 թվի մարտի 26-ին

Թաղման յոթերորդ օրը մի խումբ ընկերներով (Հով. Հաբեթյան, իր կին Անիկոն, Տիգրան Ղլղաթյան, Մուշեղ Ջաֆարյան, ես եւ մոտ 20 ուրիշ բարեկամներ, մեծ մասը մշեցի ազգականներ զորավարի) գնացինք Էջմիածին եւ այցելեցինք զորավար Սմբատի գերեզմանը: Նկարվեցինք գերեզմանի վրա խմբով: Խոսեցինք, Հով., ես եւ Մուշեղ Ջաֆ.: Ես խմեցի Սմբատի եւ Անդրանիկի կենացը: Գինին թափեցի Սմբատի եւ «Խենթի» գերեզմաններին՝ նրանց շաղկապելով իրար: Սմբատի ազգական կանանցից մեկը ընկավ գերեզմանին ողբալով.

Դու անմուրազ մեռար, Սմբատ ջան: Քու փափաք անկատար մնաց: Դու չարժանացար Մշո սուրբ հողին: Բայց դու բախտավոր ես նրանով, որ պառկեցիր Հայաստանի հողի վրա: Մասիսու քամին քու վրեն կզարկե, Սմբատ ջան:

1956 թվի մայիսի 13-ին կիրակի օրը

Մշեցի Արմենակ Ասատրյանը, Գր. Հովհաննիսյանը, Սամվել Մովսեսյանը (Կաքավի տղան), նկարիչ Պետրոս Գեւորգյանը, ես, Երեմ Սերոբյանը եւ Սամվելի եղբայր Բաղդասար Մովսիսյանը ավտոյով (Արմենակի) գնացինք Զվարթնոց, այնտեղից Էջմիածին: Տեսանք Սմբատի գերեզմանը: Խենթի գերեզմանը: Մտանք Ս. Գայանեի վանքը, Մայր Տաճարը եւ վերադարձանք Երեւան նոր բացված Հրազդանի կամուրջով՝ երեկոյան ժամը 8-ին:

Զվարթնոցում եւ Ծիծեռնակի Բերդի վրա այդ օրը նկարվեցինք:

Վարդան Մինասյանը հրաժարակեց հավաքականի կազմը

Արազ Օզբիլիսը թերեւս խաղա ՀՀ հավաքականում

ՏՈՒՐԻ

Ռուսաստանի հավաքականի հետ Եվրո-2012-ի ընտրական մրցախաղին նախապատրաստվող ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը փետրվարի 9-ին Կիպրոսի Լիմասոլ քաղաքի «Ցիրիոն» մարզադաշտում ստուգողական հանդիպում կանցկացնի Վրաստանի ընտրանու հետ: Այդ խաղը կլինի նոր մրցաշրջանում մեր հավաքականի առաջին մրցախաղը եւ ուժերի վերջին ստուգատեսն ընտրական հանդիպումից առաջ:

ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը շաս է կարեւորում ստուգողական հանդիպումը, ուստի ձգտել է հավաքական հրավիրել բոլոր ուժեղագույններին: Սակայն ձգտումը լիովին իրականացնել չի հաջողվել: Նախ հավաքին հրավիրված ֆուտբոլիստների ցանկում չէ մեր փորձառու դարպասապահ Ռոման Բերեզովսկին: Նա չէր մասնակցում «Խիմկիի» անցկացրած վերջին հանդիպումներին: Ամենայն հավանականությամբ հավաքականի դարպասը կպաշտպանի «Միկայի» դարպասապահ Գեւորգ Կասպարովը: Պահեստային դարպասապահը «Բանանցի» դարպասի պահապան Ստեփան Ղազարյանն է:

Բացակայում է նաեւ «Փյունիկի» կիսապաշտպան Կառլեն Մկրտչյանը, որը Կրասնոդարի «Կուբանում» «Լոկոմոտիվի» հետ կայացած ստուգողական խաղում վնասվածք էր ստացել: Կառլենը Մյունխենում վիրահատվել է եւ այսօր պետք է ժամանի Երեւան ու միանա իր թիմակիցներին: Բնականաբար, Կառլենը չի կարող մասնակցել հավաքականի խաղին:

Բավական մեծ թիվ են կազմում հավաքական հրավիրված պաշտպանները: Խաղին կնախապատրաստվեն հավաքականի փորձառու ավագ, 38-ամյա Սարգիս Հովսեփյանը, Ռոբերտ Արզումանյանը, Արարատ Առաքելյանը, Հրայր Մկոյանը, Հովհաննես Համբարձումյանը, Արսակ Եդիգարյանը, Արթուր Յուզբաշյանը, Լեւոն Հայրապետյանն ու Աղվան Մկրտչյանը:

Կիսապաշտպանական գծի խաղացողներից հավաքին կմասնակցեն Արթուր Եդիգարյանը, Դավիթ Մանոյանը, Էդգար Մալաքյանը, Արսակ Ալեքսանյանը, Հենրիխ Մխիթարյանը: Հարձակվողներից հրավիրվել են Գեւորգ Ղազարյանը, Էդգար Մանուչարյանը, Մարկոս Պիզելին եւ Յուրա Մովսիսյանը:

Բացառված չէ, որ Վրաստանի հավաքականի հետ խաղին մասնակցի նաեւ Ամստերդամի «Այաքսի» հարձակվող Արազ Օզբիլիսը: Հատուկ նրա խաղը դիտելու համար Վարդան Մինասյանը մեկնել էր Ամստերդամ: Թեեւ Արազն ընդամենը 10 րոպե էր խաղացել, սակայն Մինասյանը գոհ էր մնացել նրանից: Հավաքականի գլխավոր մարզիչը հանդիպել էր Օզբիլիսի հետ ու քննարկել Հայաստանի հավաքականում խաղալու հարցը: Ֆուտբոլիստը խնդրել էր մի քանի օր ժամանակ տալ վերջնական վճիռ կայացնելու համար:

Հայաստանի հավաքականը փետրվարի 6-ից Կիպրոսում կսկսի ուսումնամարզական հավաքը: Ընդ որում «Փյունիկն» այսօր է մեկնել Կիպրոս, իսկ հավաքականի մյուս ֆուտբոլիստները կմիանան փետրվարի 6-ին:

Դարչինյանի բոդոքը շուտով կբավարարվի

Վախթանգ Դարչինյանի մենեջեր Էլիաս Նասարը հայտարարել է, որ մոտ ժամանակներս WBC-ի ղեկավարությունը կսիրի Աբներ Մարեսին ռեւանշ-մրցամարտ անցկացնելու հայ բոքսֆամարտիկի հետ: Բացառված չէ, որ այդ մենամարտը կայանա այս տարվա վերջին ամիսներին:

Ինչպես հայտնի է, Վախթանգ Դարչինյանը միավորներով պարտվել էր Աբներ Մարեսին եւ այժմ 3-րդ տեղի համար մրցավեճում պետք է մենամարտի Յոնի Պերեսի հետ: Այդ մենամարտից հետո Դարչինյանի ներկայացուցիչները պաշտոնական բողոք էին ներկայացրել ռինգի մրցավար Ռոբերտ Հովարդի եւ եզրային մրցավարներից մեկի դեմ: Պաշտոնական բողոքում նշված է, որ մենամարտի ժամանակ Մարեսը մոտ 20 հարված գոտկատեղից ներքեւ է հասցրել, ինչը կանոններով արգելվում է: Ուստի պահանջում են չեղյալ համարել մենամարտի արդյունքը եւ նոր մենամարտ անցկացնել:

Նասարը տեղեկացրել է, որ ըստ WBC-ի պաշտոնական ներկայացուցչի, բոքսֆամարտի համաշխարհային խորհուրդը պատրաստ է բավարարել Դարչինյանի թիմի պահանջը: Ճիշտ է, Մարեսի հետ 2-րդ հանդիպումը կազմակերպելու վերջնական որոշման ընդունումը երկար կտեւի, ուստի հայ բոքսֆամարտիկը պետք է իր ուշադրությունը բեւեռի ապրիլին Լոս Անջելեսում Յոնի Պերեսի հետ կայանալիք մենամարտի նախապատրաստության վրա:

Նասարը նաեւ տեղեկացրել է, որ պատրաստվում են պրոֆեսիոնալ պայմանագիր կնքել 22-ամյա հայ բոքսֆամարտիկ Ազատ Հովհաննիսյանի հետ: Նա 2009-ի աշխարհի մեծահասակների առաջնությունում հասել էր մինչեւ քառորդեզրափակիչ: Սիրողական ռինգում Հովհաննիսյանը 291 մենամարտից 267-ում հաղթել է, ընդ որում 194-ն ավարտել է ժամկետից շուտ:

Ըստ Նասարի, Ազատը հուժկու հարվածների է տիրապետում: Նրանով արդեն հետաքրքրվում են եվրոպական 5 պրոմոութերական ընկերություններ: Նասարի ընկերությունը պատրաստ է Ազատին լավ պայմաններ առաջարկել: Ամենայն հավանականությամբ շուտով Հովհաննիսյանը կտեղափոխվի Ավստրալիա եւ իր առաջին պրոֆեսիոնալ մենամարտը կանցկացնի ամռանը:

Նահանջ 2 տեղով

ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում Հայաստանի ազգային հավաքականը հունվար ամսվա համեմատ 2 հորիզոնականով նահանջել է՝ զբաղեցնելով 62-րդ տեղը: Ցուցակում մեր ընտրանու հարեւանությամբ տեղ են զբաղեցրել Գաբոնի եւ Վենեսուելայի հավաքականները: Վրաստանի հավաքականը, որի հետ փետրվարի 9-ին ընկերական խաղում կմրցեն հայ ֆուտբոլիստները, մեկ հորիզոնականով առաջադիմել է ու ընթանում է 71-րդ տեղում:

Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից Ռուսաստանի ընտրանին եւս մեկ տեղով բարձրացել է ու զբաղեցնում է 12-րդ հորիզոնականը: Դա նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականների մեջ լավագույն ցուցանիշն է: Սլովակիայի ընտրանին պահպանել է տեղը 20-րդ հորիզոնականում: Դիրքերն անփոփոխ են մնացել նաեւ Իռլանդիայի հավաքականի մոտ, որը 35-րդն է: Իսկ ահա մակեդոնացիները 2 հորիզոնականով առաջադիմել են ու տեղափոխվել 79-րդ տեղ: Անդորրայի հավաքականը պահպանել է տեղը 202-րդ հորիզոնականում:

Լավագույն տասնյակում միայն մեկ փոփոխություն է կատարվել: 10-րդ հորիզոնական են տեղափոխվել հույները՝ փոխարինելով Եգիպտոսի ընտրանուն, որը 23 տեղով նահանջել է: Դասակարգման ցուցակը գլխավորում են իսպանացիները, որոնց հաջորդում են Հոլանդիայի, Գերմանիայի, Բրազիլիայի, Արգենտինայի, Անգլիայի, Ուրուգվայի, Պորտուգալիայի եւ Խորվաթիայի հավաքականները:

Մրցաշարում եռիշխանություն է

Մոսկվայի շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Լիլիթ Գալոյանը սեւերով ոչ-ոքի խաղաց Ալինա Կաշլինսկայայի հետ: Իսկ ահա ռուսաստանցի Կարինա Համբարձումովան 3 անընդմեջ պարտություններից հետո անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Իոլանտա Զավադսկայի նկատմամբ:

4-րդ տուրում չինացի շախմատիստուհի Ջժաո Սյուեն կանգնեցրեց Բատույագ Մոնգուշուլի հաղթաշարը՝ պարտության մատնելով նրան: Այդ հաղթանակի շնորհիվ Սյուեն վաստակեց 3 միավոր եւ Մոնգուշուլի ու Վալենտինա Գունինայի հետ գլխավորեց աղյուսակը: Վերջինս հաղթեց Մարիա Ֆոմինիխին: Լիլիթ Գալոյանը 2 միավորով 6-րդ տեղում է:

ՇԱԽՄԱՏ

Պողոս Նահապետյանի գերազանց մեկնարկը

Պենզայում բնակվող ՖԻԴԵ-ի վարպետ Պողոս Նահապետյանը գերազանց է հանդես գալիս Մոսկվայում անցկացվող շախմատի ուսանողական մրցաշարում, որը նաեւ Ռուսաստանի գավաթի խաղարկության փուլերից մեկն է: Նահապետյանը 4 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով գլխավորում է աղյուսակը: Հայ շախմատիստը հաղթել է Մախիմ Խմարային, Դմիտրի Կուրուկինին, Իվան Ալդոխինին եւ Ալեքսանդր Եվդոկիմովին: Առաջատարին կես միավոր են զիջում Ալեքսանդր Խարիտոնովը, Իվան Պոպովը եւ Վլադիսլավ Նոզդրուչովը:

Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Մասնակցում են 64 շախմատիստներ, որոնցից 6-ը գրոսմայստերներ են, 7-ը՝ միջազգային վարպետներ: Հաղթողը կպարգեւատրվի 100 հազար ռուբլիով:

Տիգրան Պետրոսյանը կրկին ուժեղագույնն է

Հայաստանի արագ շախմատի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո Տիգրան Պետրոսյանը հաջողության հասավ նաեւ կայծակնային խաղի հանրապետության առաջնությունում, որն առաջին անգամ էր անցկացվում: 10 մասնակիցների մեջ Պետրոսյանը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր: Նա լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած Արման Փաշիկյանին ու նվաճեց չեմպիոնի տիտղոսը: 3-րդ տեղը 6 միավորով գրավեց Զավեն Անդրեասյանը:

Հակոբյանը վերջապես հաղթեց

Վերջին տուրերի անհաջող ելույթներից հետո Վարուժան Հակոբյանը Ջիբրալթարի շախմատի մրցաշարի 8-րդ տուրում վերջապես հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով Դավիթ Կումինգսի նկատմամբ: Այս հաջողության շնորհիվ Հակոբյանը մի փոքր բարելավեց դիրքերը՝ 5 միավորով զբաղեցնելով 39-րդ հորիզոնականը:

Նալբանդյանը սկսեց հաղթանակով

Դավիթ Նալբանդյանը հաջող մեկնարկեց Չիլիում անցկացվող թենիսի մրցաշարում՝ 3 խաղափուլում առավելության հասնելով արգենտինացի Կառլոս Բեռլոկի նկատմամբ (6-2, 2-6, 6-2): Հաջորդ փուլ մտած թենիսիստների թվում են նաեւ Իգոր Անդրեեւը, Ֆաբիո Ֆոնինին, Ռոյ Մաշադուն եւ Ժոաո Սոուզան:

«Ուլիսը» փրկվեց պարտությունից

Ուռեկիում «Ուլիսը» հերթական ստուգողական խաղում ոչ-ոքի (2-2) ավարտեց մրցավեճը Բոլնիսի «Սիոնի» թիմի հետ: «Ուլիսից» աչքի ընկան նախկին փյունիկցիներ Նորայր Սահակյանն ու Ալբերտ Թադեւոսյանը: Ընդ որում «Ուլիսը» պարտությունից փրկվեց խաղավարտից մեկ րոպե առաջ: Այսօր «Ուլիսը» կվերադառնա Երեւան:

«Կիլիկիայի» ֆուտբոլիստները նոր թիմեր են փնտրում

«Կիլիկիա» ակումբի լուծարումից հետո թիմի ֆուտբոլիստներն ազատ խաղացողի կարգավիճակ են ստացել ու փորձում են իրենց համար նոր թիմ գտնել: Դա այնքան էլ դյուրին գործ չէ, քանի որ մրցաշրջանի մեկնարկին քիչ ժամանակ է մնացել եւ բարձրագույն խմբի ակումբներն արդեն գրեթե ավարտում են համալրման գործընթացը:

«Կիլիկիայի» ֆուտբոլիստներից որոշ արդեն տեղավորվել են: Մասնավորապես, Տիգրան Ղարաբաղյանը մեկ տարվա պայմանագիր է կնքել «Ուլիսի» հետ: Թիմի ռմբարկու Կարեն Խաչատրյանը փորձաշրջան է անցնում «Շիրակում», պաշտպան Արտաշես Առաքելյանը՝ «Բանանցում»: «Կիլիկիայի» դարպասապահ Արմեն Խաչատրյանն ու Հայկ Մկրտչյանը հրավիրվել են «Գանձասար»: Թիմի գլխավոր մարզիչ Աբրահամ Խաբմանյանը քաջատեղյակ է այս ֆուտբոլիստների խաղային ունակություններին, քանի որ նախկինում մարզում էր «Կիլիկիան»:

Յուրօրինակ մրցախաղ արագընթաց գնացքում

Աշխարհի 12-րդ եւ ներկայիս չեմպիոններ Անատոլի Կարպովն ու Վիշվանաթան Անանդը շախմատային յուրօրինակ մրցախաղ անցկացրին: Մադրիդի «Ատոչա» երկաթուղային կայարանի սպասասրահում նրանք նախ կայծակնային մեկ պարտիա անցկացրին: Թեեւ սպիտակներով խաղացող Կարպովը որոշակի առավելություն էր ստացել, սակայն ժամանակի սղության պատճառով ստիպված էր հաշտություն կնքել: Պարտիայի ավարտից հետո լրագրողների ուղեկցությամբ գրոսմայստերները նստեցին Մադրիդից Վալենսիա ուղեւորվող արագընթաց գնացքը: 350 կմ/ժամ արագությամբ ընթացող գնացքում Կարպովն ու Անանդը 1,5 ժամվա ընթացքում 9 խաղատախտակների վրա միաժամանակյա խաղի սեանս տվեցին: Հասնելով Վալենսիա, նրանք եւս մեկ կայծակնային պարտիա անցկացրին, որը կրկին ավարտվեց ոչ-ոքի:

Զահիշին 12 տարվա բանտարկություն է սպառնում

Հարավսլավական ֆուտբոլի կենդանի լեգենդ Դրագան Զահիշին 12 տարվա ազատազրկում է սպառնում ֆուտբոլիստների տրանսֆերային գործարքներից անօրեն ճանապարհով 13,7 մլն դոլար յուրացնելու համար: Ներկայումս դատարանում ընթանում է այդ գործի դատավարությունը:

Հետաքննությամբ պարզվել է, որ «Ցրվենա Զվեզդայի» նախագահի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում Զահիշը եւ ակումբի եւս երկու նախկին աշխատակիցներ գումարներ են վաստակել ֆուտբոլիստների տրանսֆերային գործարքներից: Սակայն 65-ամյա Զահիշն իրեն մեղավոր չի ճանաչել:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Օրվա հեստեսով

Հավատով եւ պայքարով լեցուն տարիներ

Լրացավ Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարաս Արիսի Գրիգորյանի ծննդյան 70 տարին: Ճակատագիրը միշտ էլ արդարացիորեն արժանին է հատուցում նրանց, ովքեր ապրում են հավատով եւ պայքարով եւ իրենց ապրած տարիների ընթացքում երբեք չեն կորցնում այդ հավատը եւ պայքարի կամքը:

Ծնվել է Արարատի շրջանի Այգեստան գյուղում: Հայրը՝ գյուղի դպրոցի տնօրեն Արիս Հովսեփյանը, սալիճյան բռնապետության շրջանում շատերի նման դաժան հաշվեհարդարի է ենթարկվել միայն այն բանի համար, որ անկարող էր մոռանալ հարազատ ժողովրդին ցեղասպանության ենթարկած հանցագործներին: Սրտի խոր կսկիծով խոսում էր եղեռնի զոհ դարձած հարազատների, կորցրած հայրենիքի, ծննդավայր Վանի Նահանգի Բերկրի շրջանի Գործոթ գյուղի, պապերի՝ գյուղի քահանա Տեր-Դավթի եւ գյուղապետ Մկրտչի մասին:

1957 թ. դպրոցի մանկավարժական խորհուրդը Մարաս Գրիգորյանին՝ որպես դպրոցի գերազանցիկ շրջանավարտի, ներկայացնում է ոսկե մեդալի: 1958 թ. Մ. Գրիգորյանն ընդունվում է սննդի արդյունաբերության տեխնիկումը: 1960 թ. կիսաս թողնելով ուսումը տեխնիկումում՝ նա ընդունվում է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը: 1966 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտելով համալսարանը՝ նույն տարվա սեպտեմբերին հրավիրվում է աշխատանքի ԵՊՀ նորաբաց երկրաֆիզիկայի ամբիոն՝ որպես ասիստենտ:

Ուսանողական տարիներին Մ. Գրիգորյանն ակտիվորեն մասնակցել է համալսարանում ուսանողական շարժմանը, եղել է այն առաջամարտիկներից, որոնց ջանքերի շնորհիվ կազմակերպվեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին նվիրված ուսանողական ցույցը:

1967 թ. Մ. Գրիգորյանն ընդունվում է ասպիրանտուրա եւ գործուղվում Մոսկվայի պետական համալսարան: 1973 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Սողանքային երեւույթների ուսումնասիրությունը երկրաֆիզիկական մեթոդներով», թեմայով: Նրա գիտական այդ աշխատանքում շոշափված հարցերը հիմք հանդիսացան սողանքային երեւույթների եւ լանջերի կայունության գնահատման նոր մեթոդի մշակման, որը կիրառվեց նախկին ԽՍՀՄ տարբեր տարածքներում սողանքային երեւույթների ուսումնասիրման գործում: Երկրաբանական գիտությանը մատուցած իր այդ նորամուծության արդյունքներով Մ. Գրիգորյանը զեկուցումներով հանդես եկավ Դուբլինում (1978 թ.), Կաննում (1979 թ.), Վենետիկում (1981 թ.) կազմակերպված միջազգային կոնֆերանսներում:

1976 թ. Մ. Գրիգորյանն ընտրվեց երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ: Նրա ջանքերով կազմակերպվեցին սեյսմահետախուզության, երկրաֆիզիկական մեթոդների մոդելավորման, գրավիհետազոտության եւ մագնիսահետախուզության լաբորատորիաներ եւ երկրաշարժերի գրանցման սեյսմիկ կայան, որի շնորհիվ համալսարանը դարձավ նաեւ երկրաֆիզիկայի խնդիրների ուսումնասիրման կենտրոն:

Մ. Գրիգորյանը 1980 թ. ընտրվեց երկրաբանական ֆակուլտետի դեկան, որն անընդմեջ ղեկավարեց մինչեւ 2008 թ.: 2008 թ. համալսարանի երկու՝ աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետները միավորվեցին, եւ կազմակերպվեց նոր՝ աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետ, որի դեկան ընտրվեց Մ. Գրիգորյանը:

Հատկապես դեկանի պաշտոնում, որն իրականացնում է արդեն 31 տարի շարունակ, բացահայտվեցին Մ. Գրիգորյանի ինչպես մարդկային լավագույն հատկանիշները, այնպես էլ նրա՝ իբրեւ ուսումնական եւ գիտական աշխատանքների հմուտ կազմակերպչի ունակությունները: Ճանաչելով ուսանողներին, ծանոթ լինելով աշխատակիցների հոգսերին՝

կավարել է կարեւոր գիտական թեմաներ: Որպես գլխավոր մասնագետ՝ 1987-88 թթ. մասնակցել է Խորհրդային Միության կողմից Սիրիայում նախագծվող ատոմակայանի շինհրապարակի ընտրման աշխատանքներին: Այսօր էլ ֆակուլտետում նրա ղեկավարությամբ կատարվում են ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային դրամաշնորհների ֆինանսավորմամբ գիտահետազոտական աշխատանքներ: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ:

Երիտասարդ մասնագետների պատրաստման, երկրաբանական գիտության զարգացման գործում Մարաս Գրիգորյանի ներդրած ավանդը բարձր է գնահատվել: Նա պարգեւատրվել է Անանիա Շիրակացու մեդալով, ՀՀ ԿԳՆ եւ ԵՊՀ ոսկե մեդալներով: Իսկ ամենաբարձր պարգեւը, թերեւս, շրջապատի՝ գործընկերների, ուսանողների, ընկերների եւ հարազատ-բարեկամների կողմից նրա հանդեպ դրսեւորվող անկեղծ սերն ու հարգանքն է:

Իմաստավորված յոթանասուն տարիներ, հայրենիքին ու իր գործին նվիրված կյանք: Մենք ցանկանում ենք մեր գործընկերոջը՝ Մարաս Արիսի Գրիգորյանին, քաջառողջություն, երջանկություն եւ նորանոր հաջողություններ:

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵՊՀ գիտական
քաղաքականության եւ
միջազգային համագործակցության գծով
պրոռեկտոր, պրոֆեսոր

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 1-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, աղադրլարացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում փոփոխություններ կատարեց «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, մասնավորապես, փոփոխության է ենթարկվել պարտադիր պահուստավորման նորմատիվը: Հավատարիմ մնալով իր կողմից հայտարարված քաղաքականությանը, Կենտրոնական բանկը պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխությունն իրականացնում է փուլերով՝ աստիճանաբար անցում կատարելով Հայաստանի Հանրապետության դրամով պահուստավորմանը: Տվյալ փուլում սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափից, որը կազմում է ներգրավված միջոցների 12 տոկոսը, 9%-ը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության դրամով (նախկինում 6%-ի փոխարեն), իսկ 3%-ը՝ համապատասխան արտարժույթով (Եվրո-ի համար Եվրոյով, մնացած արտարժույթների համար՝ ԱՄՆ դոլարով, նախկինում 6%-ի փոխարեն): Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված այս որոշման պահանջները ուժի մեջ են մտնում ընդունման պահից, եւ բանկերի վրա տարածվելու են 2011 թվականի փետրվարի 8-ից՝ պահուստավորման հաշվետու ժամանակաշրջանից սկսած:

Շարունակելով ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների պարզեցման գործընթացը, որը սկսվել է 2010 թվականի դեկտեմբերին ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, աղահովագրական ընկերությունների եւ բանկերի համար ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին կատարված վճարների վերաբերյալ հաշվետվական ձեւի ներկայացման պարտադիր պահանջը հանելով, ԿԲ խորհուրդը փոփոխություններ կատարեց «Աղահովագրական բրոքերների հաշվետվությունների ձեւը, տեղեկատվության կազմը եւ ներկայացման կարգն ու ժամկետները» փաստաթղթում, «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը եւ կարգավորումը» կանոնակարգ 10-ում եւ «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձեւերը եւ լրացման կարգը» փաստաթղթում. դրանց համաձայն գրավատների, փոխանակման կետերի եւ աղահովագրական բրոքերների նկատմամբ եւս չի կիրառվելու Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին կատարվող վճարների վերաբերյալ հաշվետվական ձեւի ներկայացման պահանջը, քանի որ տվյալ տեղեկատվությունը հնարավոր է այլ աղբյուրներից ստանալ:

Արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիաներ տրամադրվեցին «ԱԼԵՔՍ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի թիվ 8 մասնաճյուղին, ԱԼԵՔՍ ԳՐԻԳ ՍՊԸ-ի թիվ 9 մասնաճյուղին, «ՍԻՄԱՈ» ՍՊԸ-ին եւ «ԴԻ ՋԻ ԷՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին: Ուժը կորցրած ճանաչվեցին «Ա3 ԷՍ ՋԻ» աղահովագրական ՍՊԸ-ի ոչ կյանքի աղահովագրության թվով 2 լիցենզիաներ:

ՀԱՄԱՌՈՏ

Ուկրաինական ավտոբուսները՝ լիզինգով

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանը ընդունել է Հայաստանում Ուկրաինայի դեսպան Իվան Կուխտային: Ի թիվս այլ հարցերի, հանդիպման ժամանակ քննարկվել են Երեւանի մետրոպոլիտենի համար ուկրաինական արտադրության շարժակազմի ձեռքբերման, ինչպես նաեւ նոր ավտոբուսների ներկրման հնարավորությունները: Մանուկ Վարդանյանն առաջարկել է քննարկել ավտոբուսները լիզինգով տրամադրելու հնարավորությունը:

Ա. Մ.

Ինտերնետի առավել մատչելի սակագներ

«Վիվասել-ՄՏՍ»-ի «ՄՏՍ կոնեկտ կլասիկ հեռվճարային» սակագնային պլանի բաժանորդներին տրամադրվող ինտերնետ-փաթեթների չափերը կրկնապատկվել են եւ դարձել ավելի մատչելի: Ըստ ընկերության հաղորդագրության, 2 ԳԲ փաթեթն արժե 6000 դրամ, 5 ԳԲ-ն՝ 8000 դրամ, 10 ԳԲ-ն՝ 12000 դրամ, 30 ԳԲ-ն՝ 19900 դրամ:

Ա. Մ.

Թեյը կրճատում է ուղեղի ուռուցքի եւ ինսուլտի հավանականությունը

Օրական երեք բաժակ թեյ խմելը կպահպանի առողջությունը, պնդում է Լոնդոնի համալսարանին կից դեղաբանության դպրոցի բուսաքիմիայի պրոֆեսոր Սիմոն Գիբբոնսը: Հետազոտությունները վկայում են, որ կանոնավորապես թեյ խմող մարդիկ համեմատաբար քիչ են ունենում ուղեղի ուռուցքներ, ինսուլտ, ավելի լավ են դիմակայում վարակներին:

«Դեյլի մեյլ» թերթը գրում է, որ թեյի բոլոր տիպերը պարունակում են օգտակար հակաօքսիդանտներ: Կաթ ավելացնելը խանգարում է դրանց, շաքար ավելացնելը՝ ոչ:

Հոլանդիայում 15 տարի անցկացված հետազոտությունները հաստատում են, որ սեւ թեյի ֆլավոնոիդները (հակաօքսիդանտային սննդանյութեր) նպաստում են անոթները նեղացնող «վաս» խոլեստերինի արտադրության կրճատմանը:

Իսկ ամերիկացի մասնագետները պարզել են, որ օրական 5 բաժին սեւ թեյ խմելը 11 տոկոսով իջեցնում է «վաս» խոլեստերինի մակարդակը: Ֆլավոնոիդները նաեւ բարելավում են արյունատար անոթների աշխատանքը:

Սեւ թեյի տերեւներում պարունակվող կոֆեինը եւ L-տեանինը նպաստում են մտքի կենտրոնացմանը, իսկ պոլիֆենոլները արգելակում են քաղցկեղի բջիջների աճը (Նորտումբրիայի համալսարանի հետազոտություն):

Պոլիֆենոլներով հատկապես հարուստ է կանաչ թեյը, որն օգնում է նաեւ մարսողական համակարգին, խթանելով աղիների մկանների կծկումը, բարելավելով վիճակը փորկապության, փորափքանի, խիթերի ժամանակ, եւ նպաստում է քաշի նվազմանը: Կոճապղպեղի թեյը վերացնում է ուրախառնուքը եւ սովորաբար խորհուրդ է տրվում հղի կանանց:

«ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացվում է անշարժ եւ շարժական գույքի, բազմաթիվ արտանխնայութեական այլ արժեքների աճուրդային վաճառք: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ օսարման է ներկայացված նաեւ՝ 2 հատ TAT/R, 2500 KBA տրանսֆորմատորներ, միավորի մեկն. գինը՝ 4000000 ՀՀ դրամ եւ 2ԿՏՊ2500/10/0.4, N25581, 1990թ. տրանսֆորմատորային համալիր կայան, մեկն. գինը՝ 3000000 ՀՀ դրամ:

Աճուրդները կայանում են ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ աճուրդների ցուցակներին եւ կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

AMERIABANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երեւան, Նոր Նորք վարչական շրջանում
անհրաժեշտ է տարածք
«Ամերիաբանկ» ՓԲԸ մասնաճյուղ բացելու համար

Վարձակալվող տարածքի անհրաժեշտ չափանիշները՝

- Տարածքը պետք է գտնվի Գայի պ. եւ Նանսենի փ. խաչմերուկից մինչեւ Գայի պ., Բաղյան փ. եւ Ա. Հովհաննիսյան փ. խաչմերուկ հատվածում:
- Տարածքը պետք է լինի առանձին շինություն կամ գտնվի շենքի առաջին հարկում, մայթի հարթության մակարդակից ոչ ցածր:
- Տարածքի ընդհանուր չափը՝ 250 - 300 քմ
- Առաստաղի բարձրությունը՝ առնվազն 3 մ
- Ճակատային հատվածում անհրաժեշտ է առնվազն երեք վիտրաժի առկայություն, մուտք փողոցի կողմից, ցանկալի է պահեստային դուռ բակի կողմից:
- Ցանկալի է նկուղ՝ ոչ պակաս քան 30 քմ, առաստաղի բարձրությունը ոչ պակաս քան 2,70 մ, մուտք դեպի նկուղ՝ առաջին հարկից:
- Տարածքի դիմացը ավտոմեքենաների կայանատեղի առկայությունը պարտադիր է

Պահանջվող փաստաթղթեր

- նամակ-առաջարկ՝ նշելով ակնկալվող ամսական վարձավճարի չափը, տարածքի համառոտ նկարագրությունը,
- տարածքի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները,
- անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- լուսանկարներ, որոնք հստակ բնորոշեն տարածքի գտնվելու վայրը:

Փաստաթղթերն ուղարկել էլ. հասցեով կամ փակ ծրարով հանձնել «Ամերիաբանկ» ՓԲԸ, Տարածքային ստորաբաժանումների ձեւավորման բաժին, հասցե՝ ք. Երեւան, Գ.Լուսավորչի 9 մինչեւ 2011թ. փետրվարի 5-ը:

Տարածքների նախնական ընտրության ժամանակ հաշվի է առնվելու 1 քմ համար առաջարկվող վարձավճարի համադրելի գումարը: Առաջարկություններ հեռախոսազանգերով չեն ընդունվում:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 2.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: